



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները: Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՏԱՍԸ ՀԱՐՑ ՏԱՍԸ ՊԱՏԱՍԽԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՎ ԹՈՒՐԹԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԻՋԵՎ ՊԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՍՏԱՏՄԱՆ ՈՒ ԵՐԿԿՈՂՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՏԵՍԱԿԵՏՆԵՐ ԵՆ ՀԱՅՏՆՈՒՄ
ԵՊՀ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԸ

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱՎԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ – 2009

ՀՏԴ 327
ՊՄԴ 66.4
S 232

**Հրատարակության է նրաշխարհում
ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների
ինստիտուտի գիտական խորհուրդը**

Խմբագրական խորհուրդ
Արամ Սիմոնյան
Վարդան Գրիգորյան
Էդիկ Զոհրաբյան
Վահրամ Պետրոսյան

Կազմող՝ Ալիկ Ղարիբյան

S 232 Տասը հարց, տասը պատասխան. Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման ու երկկողմ հարաբերությունների զարգացման մասին արձանագրություններ: Տեսակետներ են հայտնում ԵՊՀ փորձագետները: Եր.: ԵՊՀ հրատ., 2009, 48 էջ:

Նախատեսված է փորձագետների և հասարակական լայն շրջանակների համար:

ՊՄԴ 66.4

ISBN 978-5-8084-1199-9

© ԵՊՀ հրատարակչություն, 2009 թ.
© Կազմողի համար, 2009 թ.

ԽՈՍԲ ԸՆԹԵՐՑՈՂԻՆ

Վերջին տարիների՝ մեր երկրի արտաքին և ներքին հավասարակշիռ քաղաքականության շնորհիվ Հայաստանի Հանրապետությունը դարձել է վստահելի գործընկեր տարածաշրջանի ու աշխարհի շատ երկրների համար, և արդի աշխարհաքաղաքական կարևորագույն ռազմավարական զարգացումներից մեկուսանալը չի բխում մեր երկրի շահերից:

Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման և փոխհարաբերությունների զարգացման մասին արձանագրությունների ստորագրումը հասարակական լայն քննարկումների առարկա է դարձել:

Հաշվի առնելով հարցի խիստ կարևորությունը՝ Երևանի պետական համալսարանում ևս տարբեր մասնագետների և ուսանողության մասնակցությամբ կազմակերպվեցին քննարկումներ, որոնց արդյունքում ձևավորվեց սույն գրքույկը, որտեղ ամփոփ ներկայացվում են այդ արձանագրություններին վերաբերող հարցերի վերլուծական կարծիքներ և հանրությանը մտահոգող խնդիրների մասնագիտական պատասխաններ: Հատկանշական է, որ գրքույկում տեղ գտած նյութերի հեղինակների գերակշիռ մասը երիտասարդ սերնդի ներկայացուցիչներ են:

Ժողովածուն չի հավակնում աներկբա փարատելու բոլոր մտահոգությունները, որ առկա են թե՛ Հայրենիքում և թե՛ Սփյուռքում, և ոչ էլ սպառնիչ պատասխան տալու ծառացած բոլոր հարցերին: Այն միտված է նպաստելու և օժանդակելու հայության լայն շրջանում օբյեկտիվ ու հավասարակշիռ տեսակետների, մոտեցումների և կարծիքների ձևավորմանը, հանդուրժողականության ու փոխըմբռնման հաստատմանը:

Արամ Սիմոնյան
ԵՊՀ ռեկտոր

**ԱՏՈՐԱԳՐՎԱԾ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.
ՄՅԵՐԸ ԴՈՒՐՍ Է ԳԱԼԻՍ ՔԱՐԱՆՁԱՎԻՑ**

Նման հարցադրումը, անշուշտ, շատերի համար խիստ զարմանահարույց կարող է լինել: Եվ դա պատահական չէ, քանզի դժվար է առաջին իսկ պահից «որսալ» երկու Միերի և ստորագրված արձանագրությունների եղելության միջև որոշակի «կապը»: Եվ սա այն դեպքում, երբ ստորագրված արձանագրությունների դատապարտմանը միտված տեսակետները հիմնականում «կառուցվում» են *թուրք-հայկական սահմանի բացմամբ Թուրքիայի տնտեսական էքսպանսիայի անխուսափելիության, Արցախի հարցում ԴԴ միակողմանի և կործանարար զիջումների, Դայոց ցեղասպանության ուրացման* դրույթների հիման վրա: Դրույթներ, որոնք ոչ միայն լրջագույն հիմնավորման կարիք ունեն, այլև որոշակի տուրք են հայկական քաղաքական «զգացմունքայնությանն» ու ոչ հազվադեպ դրսևորվող անիրատեսությունը: Ասվածը բնավ չի նշանակում, թե ստորագրված արձանագրությունները հարցեր չեն կարող առաջացնել, մտահոգությունների առիթ չեն կարող դառնալ: Ավելին, դրանց գոյությունը միազամայն *հասկանալի և ողջունելի* պետք է համարել, քանի որ խնդրո առարկա հարցի վերաբերյալ տեսակետների բախումը, մասնագիտական բանավեճերը կարող են օգտակար լինել՝ հնարավոր ռիսկերի առավել ամբողջական բացահայտման և հաղթահարման ուղիների մշակման համար:

Փաստ է, որ արձանագրություններն արդեն ստորագրված են: Սակայն, համոզված ենք, դրանց հանդեպ հետաքրքրությունը չի կարելի բացատրել սոսկ *թուրք-հայկական սահմանի բացման, Դայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման, արցախյան հակամարտության լուծման* հետ կապված տարաբնույթ հարցերի կարևորության գիտակցումով: Բանն այն է, որ որոշակի նախապատրաստական շրջան անցած այս գործընթացը հայ ժողովրդի քաղաքական կյանքում նշանավորվեց մի իրադարձությամբ, որը խիստ պայմանականորեն կարելի է անվանել *պրագմատիկ նախաձեռնողականություն*, որը, օրինակ, ի տարբերություն ԴԴ նախկին նախագահների *սաղմնային նախաձեռնո-*

դականության՝ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի շնորհիվ դարձավ իրականություն: Ասվածն առավել առարկայական կդառնա, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ ՀՀ բոլոր նախագահներն էլ կողմ են եղել Թուրքիայի հետ հարաբերությունների *(առանց նախապայմանների)* բարելավմանը, սակայն միայն ներկայիս նախագահի հետևողական քաղաքականությամբ նախորդ նախագահների «մտադրությունները» կյանքի կոչվեցին: Ուստի՝ որոշակիորեն տարօրինակ են այն ուժերը կամ մոտեցումները, որոնք ՀՀ նախագահի «ֆուտբոլային դիվանագիտությունն» աննահանջ դատապարտում են:

Միգուցե դա կարելի է բացատրել. ա) այդ մոտեցումների ոչ այնքան սկզբունքային, որքան իրավիճակային բնույթ ունենալու գործոնով, քանզի սկզբունքայինության պարագայում հետևողական քննադատությունից չպետք է խուսափեին ընդհանուր դիրքորոշում ունեցող ՀՀ բոլոր նախագահները, բ) այն հանգամանքով, որ «ֆուտբոլային դիվանագիտությունը» որակվեց որպես նախապայմանային, ինչը, բնականաբար, կարող էր հիմք հանդիսանալ համապատասխան քննադատության: Մինչդեռ, հարկ է փաստել, որ ստորագրված արձանագրությունների տեքստում ՀՀ-ին հասցեագրված նախապայմաններ ժո յուր չկան: Իսկ դա թույլ է տալիս պնդելու, որ բազմաթիվ քննադատողների համար արձանագրությունների տեքստում «արտացոլված» է ոչ միայն այն, ինչ հստակ կա, այլև այն, ինչ չկա, բայց «ցանկալի» է:

Պրագմատիկ նախաձեռնողականությունը, ի դեմս ստորագրված արձանագրությունների, անշուշտ, պետք է հայ իրականության որոշ շրջանակներում բավականին լուրջ հակազդեցության հանդիպեր, քանի որ այն կարծրատիպեր կազմաքանդող, մեր հոգեբարոյական նկարագրի որոշ թերիներին հակասող նախաձեռնություն էր:

Դարեր շարունակ բարոյական հաղթանակներով բավարարվող, սեփական ճակատագրի կերտման գործից խուսաճավող, կողմնորոշումների դաշտում «ինքնորոշման» իր իրավունքը փնտրող, արդարամտությունը դրսից «աղերսող», «Ասանա Ծռեր»-ի Միերի նման իր թերիների քարանձավում աշխարհի անարդարությունների դեմ «պայքարող» հայ ժողովրդին դժվար հասկանալի է այն, որ աշխարհի անարդարությունները չեն վերանա քարանձավում մնալով, սեփական խնդիրները չեն լուծվի, եթե իր նկարագրի խնդիրը չլուծվի: **«Մենք այնքան անարժեք ենք թվում մեզ, կարծես մեր օրերի համար գրում էր Նոդեիլ, որ չենք կարծում, թե քաղաքական աշխարհում որևէ բանի պատճառ - անգամ դժբախտության - մենք կարող ենք լինել: Ամեն ինչ լինում է գուցե մեզ համար, բայց մեզնից դուրս, անկախ մեզնից»:** Այո՛, մենք մեզ

այնքան անարժեք ենք թվում, որ կողմնորոշումների դաշտում ենք որոնում ինքնորոշման մեր իրավունքը, այլ ոչ թե ինքնորոշվածության դիրքերից սահմանում մեզ համար ցանկալի կողմնորոշումների շրջանակը: Այնքան անարժեք, որ մեր դիվանագիտական նախաձեռնությունները բացատրում ենք օտարածին *(տվյալ պարագայում՝ թուրքական)* դիվանագիտության ամենագործության որոգայթներով, նորարարությունները՝ դավաճանությամբ, ինքնուրույնության կամքը՝ ինքնախաբեությամբ: Չենք ցանկանում հասկանալ, որ արտաքին ճակատում պարտությունները մեր ներքին պարտությունների արտահայտություններն են, որ ոչ մի ստորագրված արձանագրություն չի կարող Արցախի, Ցեղասպանության և այլ հարցեր լուծել, եթե **ինքներս մեզ համար դրանք հստակ լուծել ենք:** Մեզ համար էլ այսօր շատ դժվար է հավատալ մեր՝ գործոն լինելու հնարավորության գաղափարին: Հայկական քաղաքական կրավորականությունը մեզ հարազատել ենք իբրև սրբազան ճշմարտություն, որն էլ ցանկացած նախահարձակություն հոգեբանորեն անընդունելի է համարում, քանի որ համարվում է մեղանշում ճշմարտության դեմ: Պատահական չէ, որ դարեր շարունակ մեր կրավորական նկարագրին հարիր ճշմարտությունների մենիշխանությամբ ապրելով՝ մենք հիմնականում չկարողացանք լրջագույն հաջողություններ արձանագրել քաղաքական կյանքում: Չկարողացանք և չէինք էլ կարող, քանզի «ճշմարտությունների» վերանայման խնդիր ունենալով՝ չվերանայեցինք: Պատահական չէ, որ ռուս նշանավոր մտածող Պ. Սորոկինը տարբեր մշակույթների վերելքն ու անկումը բացատրում էր «ճշմարտությունների» մենիշխանությամբ, այնպիսի «ճշմարտությունների», որոնք համահունչ չէին իրականության թելադրանքներին: **«Վաղ թե ուշ, -** գրում է Պ. Սորոկինը, **- գալիս է պահ, երբ այն (նկատի ունի ժողովուրդների սոցիալ-մշակութային կյանքը - Ա. Սարգսյան) կանգնում է այլընտրանքի առջև. կամ՝ շարունակել զարգացումը տվյալ ուղղությամբ և վերապրել ամբողջական ատրոֆիա, կամ էլ փոխել իր ընթացքը, ճշմարտության, իրականության և մշակութային արժեքների առավել կենսունակ համակարգով»:** Հակառակ պարագայում, ըստ Սորոկինի, մշակույթները կդառնան սոսկ թանգարանային մոուշ, կլինեն նյութ առավել ուժեղ, կենսունակ և ստեղծագործ մշակույթների համար: Այս տեսանկյունից արձանագրությունների ստորագրման ողջ գործընթացը ողջունելի պետք է համարել, քանի որ դրանում նկատվում է միտվածություն դեպի մեր քաղաքական մշակույթի բարեփոխում, քաղաքական «սենտիմենտալիզմից» կամ ոչնչապաշտությունից անցում դեպի քաղաքական իրատեսություն: **«Մուրացկա-**

նություն և լավանություն, - ժամանակին գրում էր Նժդեհը,- մի ամբողջ ժամանակի հոգեբանություն, քաղաքական մեր միակ զենքը: Լավանությունը, սակայն, ապացույց է հոգևոր տհասության կամ անարիության: Մուրացկանությունը զգվելի է ընդհանրապես: Մուրացկանին օգնում են ոչ միայն կարեկցանքից դուրս, այլև հաճախ զգվանքից: Ավելի սարսափելի է քաղաքական մուրացկանությունը, քանի որ քաղաքականության մեջ կարեկցանք չկա, իսկ զգվանք՝ շատ քիչ»:

Վերոգրյալի համատեքստում ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի նախաձեռնողական քաղաքականությունը կարծում ենք պատշաճում է մեծանուն հայի՝ Գարեգին Նժդեհի «վճռական մեծակի» գործունեության բնութագրին, քանի որ նկատվում է հստակ նպատակ և դրան հասնելու վճռական կամք: Իհարկե, ասվածը չի նշանակում, թե իր նախաձեռնողության հարցում նախագահը չունի համախոհներ կամ կողմնակիցներ, դա պարզապես նշանակում է ինքնուրույն կերպով ազգային շահերին հետամուտ լինելու նախագահական հավատ և վճռականություն:

Այսպիսով, խնդրահարույց արձանագրություններն ինքնին չեն վկայում Հայաստանի պարտվողական քաղաքականության մասին, դրանք հավաստումն են այն բանի, որ մեր պետության քաղաքականությունն այսօր նպատակ ունի հաղթահարել բարոյական հաղթանակներով բավարարվելու բարդությունը, խնդիր ունի մեզ համար կարևոր հարցերի բարձրաձայնման համար լրացուցիչ «խոսափող» ունենալ մաև թուրքիայում, Սիերին քարանձավից «դուրս բերելով»՝ ցանկություն ունի իրական մասնակիցը դառնալ աշխարհի և մեր կյանքի փոփոխման գործի: Հուսով ենք, որ ստորագրված արձանագրությունների արդյունքները կլինեն իրատեսական և շոշափելի, նախաձեռնությունը կդիմանա պատմության ու ժամանակի «փորձաքննությանը»:

*Արմեն Սարգսյան
փլիխտոյական գիտությունների թեկնածու*



ԿՏԱՆԳՎՈՒՄ Ե ԱՐԴՅՈՔ ՀԱՅԻ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ
ԹՈՒՐԻԱՅԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ

Տեսակետ 1

Հայ-թուրքական հարաբերությունների թեմատիկան մեզանում նոր երևույթ չէ: Ավելին՝ այն շատ մեծ նշանակություն է ունեցել ժամանակակից հայի ազգային ինքնության ձևավորման և պահպանման համար: Ազգային ինքնագիտակցությունը կառուցում է հայի «մենքը»՝ հակադրելով և սահմանազատելով այն «նրանցից»: Սիմվոլիկ սահմանազատման մյուս կողմում որպես գլխավոր «հակամեք» հանդես են գալիս թուրքերը: Այդ հակադրությունը հայ-թուրքական փոխհարաբերությունները բնորոշում են թշնամական: Այստեղից հետևություն. թշնամուն չի կարելի զիջել և ոչ մի հարցում: Հետևաբար, երբ խոսում են հնարավոր զիջումների մասին, ազգային ինքնության որոշակի փոփոխության խնդիր է առաջանում:

Ազգային ինքնության պահպանումն ազգապահպանություն է նշանակում: Միայն թե մարդկության զարգացման ժամանակակից միտումները պահանջում են, որ հայի ավանդական էթնոշակության ինքնության պատմական բաղադրիչները համալրվեն հայ ազգի հետագա զարգացման ուղենիշերով իմաստավորված բաղադրիչներով: Հայ-թուրքական հարաբերությունների համատեքստում տեղի ունեցող գործընթացներն իրողություն է, որը պետք է ընդունել որպես փաստ և հետ նայելու փոխարեն՝ փորձել առաջ գնալ: Դա չի նշանակում մոռանալ անցյալը, կորցնել պատմական հիշողությունը: Փոխվում է փոխհարաբերվելու մարտավարությունը:

Նման փոփոխության անհրաժեշտությունը պայմանավորող հիմնական գործոնները երկուսն են՝ աշխարհի գլոբալացումը և հայոց անկախ պետականության կայացումը: Աշխարհի գլոբալացման հիմքը համաշխարհային տնտեսական համակարգի ձևավորումն է: Վերջինս էլ անհնար կլինեք առանց ժամանակակից հաղորդակցական տեխնոլոգիաների: Տեղեկատվական հոսքերի գլոբալ կառավարումը, դրանց

արագընթաց տարածումն աշխարհով մեկ տեղեկատվական իրականության նոր իրողություն են ստեղծում, որն անվանում ենք «տեղեկատվական հասարակություն»: Այսուհետև մենք պետք է գիտակցենք, որ մեզանում կատարվող ամեն ինչ այդ հասարակության գլոբալ համատեքստում է տեղի ունենում:

Գլոբալ համատեքստում է իրականանում նաև մեր պետականության կայացումը: Քանի որ պետական իշխանությունը ենթադրում է նաև մեր պետության իրավասությունների ճանաչում «նրանց» կողմից, ստիպված ենք առաջնորդվել գլոբալ աշխարհում ընդունված սկզբունքներով և ոչ թե ցանկություններով: «Տեղեկատվական հասարակության» պայմաններում փոխվում են ազգային պետության բնութագրիչներն ու դերակատարությունը: Տարածական ներփակման փոխարեն կարևորվում է մասնակցությունը գլոբալ հաղորդակցության գործընթացներին: Եթե մեր ազգի քաղաքական գործունեությունը թույլ չի տալիս սահմանելու այդ գործընթացների բովանդակությունն ու ուղղությունը, ապա հնարավոր է և անհրաժեշտ, օգտագործելով «տեղեկատվական հասարակության» ցանցային կառուցվածքի հանգույցներում կենտրոնացած հայկական սփյուռքի կարողությունները և հայոց պետության քաղաքական հնարավորությունները, այդ գործընթացները ծառայեցնել մեր ազգային շահերին:

Այստեղից էլ առաջանում է մի կարևորագույն գերխնդիր՝ հայ ազգի ինքնակազմակերպում, տնտեսական, քաղաքական, մշակութային և այլ հատուկ կառույցների ստեղծում: Իսկ կազմակերպել հնարավոր է միայն ազգային ինքնության առանցքի շուրջ: Դրա համար առավելապես էթնոմշակութային բաղադրիչներով սահմանված ազգային ինքնությունը պետք է արդիականացվի, պետք է ձևավորվի ազգ-պետության հետ իրեն նույնականացնող հայի ինքնությունը թե՛ Հայաստանում, թե՛ Սփյուռքում:

Ինքնությունը ոչ այլ ինչ է, քան ինքնանույնականացման գործընթացների ամբողջություն: Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացը պահանջում է, որ մենք մեզ նույնականացնենք ոչ միայն անցյալի կորուստների, այլև ներկայի հաղթանակների և ապագա անելիքների հետ: Նման մոտեցման դեպքում մենք չենք խուսափի թուրքերի հետ հարաբերվելուց, չենք լինի այդ հարաբերության կրավորական կողմ: Հաստատում ռազմավարական նպատակների հասնելու համար անհրաժեշտ է նոր, ավելի ճկուն մարտավարություն: Հայության համար սա գերխնդիր է թե՛ անցած ճանապարհին ձեռքբերումների և կորուստների չմոռացվող փաստի, թե՛ աշխարհաքաղաքա-

կան բարդ դիրքի, թե՛ համաշխարհային հասարակություն արդեն կայացած մուտքի առումով: Հետևաբար՝ հայի ավանդական ինքնության արդիականացումն օրակարգային խնդիր է:

Արթուր Մկրտիչյան
փլիխոփայական գիտությունների դոկտոր

Ցեական 2

Հայաստանի և Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման դեպքում մեր ազգային ինքնության կորստի մասին պատկերացումները համակարգված չեն և կարիք ունեն պարզաբանման:

Ինքնությունը պատմամշակութային երևույթ է, որի հիմքում ընկած են այնպիսի էական գործոններ, ինչպիսիք են ազգային պատկանելիության զգացումը, ազգային ինքնագիտակցությունը, պետությունը, լեզուն, ավանդույթները: Ակնհայտ է, որ որևէ երկրի հետ հարաբերությունների հաստատումը չի կարող հայի էթնոհոգեբանության մեջ նվազեցնել նշված գործոնների դերը, ուստի՝ հայի ազգային ինքնությանն այս առումով վտանգ չի սպառնում:

Տարածված մտահոգությունների դրդապատճառներից առաջնայինն այն է, որ հայի ինքնագիտակցության մեջ արմատացած է Ցեղասպանության զոհի զգացումը, ինչն առավել սուր, ցավոտ արտահայտվում է սփյուռքահայերի միջավայրում, քանզի հայկական Սփյուռքն առաջացել է հիմնականում Ցեղասպանության հետևանքով, և սփյուռքահայերին համախմբող գլխավոր գործոններից է միասնական թշնամու՝ թուրքի կերպարը: Այս իմաստով հասկանալի է, թե ինչու ինքնության կորստի մասին ազդակները ավելի շատ գալիս են Սփյուռքից, որի գիտակցության մեջ թշնամու հետ հարաբերությունների հաստատումը դիտվում է Թուրքիայի դիվանագիտական և բարոյական հաղթանակ:

Միևնույն ժամանակ խնդիրն ունի մի տեսանկյուն ևս. բանն այն է, որ անկախության պայմաններում ինքնության պահպանման գործոններ են հանդես գալիս ինչպես ազգային մշակույթը, այնպես էլ ազգային պետությունը: Դեռ ավելին, լինելով առաջին հերթին քաղաքական միավորում՝ մշակութային երևույթից բացի ազգն ինքնության պահպանման հարցում առաջնահերթ կարիք ունի ուժեղ պետության, քանզի ձեռք բե-

րելով անկախություն՝ ազգն իր զարգացման ճանապարհին այլևս նպատակ ունի ավանդական-մշակութային միավորից վերածվելու քաղաքական հանրության, դառնալու քաղաքական ազգ: Թերևս սրա կարևորությունը հայաստանաբնակ հայերն առավել մեծ չափով են զգում, քան սփյուռքահայերը, որովհետև վերջիններիս գիտակցության մեջ Հայաստան-երկիրն ակնկալվում է Հայրենիքի իմաստով, իսկ հայաստանաբնակների մոտ՝ Պետության: Հայաստանը որպես Հայրենիք և որպես Պետություն ընկալվումները բնավ չեն հակասում իրար, այլ միայն լրացնում են միմյանց այն իմաստով, որ «Հայրենիք» բարոյական կատեգորիան իր ամբողջական տեսքն է ստանում «Պետություն» քաղաքական կատեգորիայի միջոցով: Այդ Պետությունն է, որ այսօր կարիք ունի զարգանալու, ուստի և փոխելու հարևանների հետ իր հարաբերությունների ձևաչափը, որպեսզի հիմք ստեղծի ժամանակակից հայի ազգային ինքնության համար:

Սովսես Դեմիրճյան
փիլիսոփայական գիտությունների թեկնածու

**ԱՆԴՐԱՂԱՌՆԱԼՈ՞՞Ւ ԵՆ ԱՐԴՅՈՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԹՈՒՐԶԻԱՅԻ ՄԻՋԵՎ
ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ
ԵՎ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ
ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԻ
ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎՐԱ**

Տեսակետ 1

2008 թ. սեպտեմբերից ի վեր Թուրքիայի հետ Հայաստանի բանակցությունների նպատակն էր առանց որևէ նախապայմանների դիվանագիտական հարաբերությունների հաստատումն ու արդյունքում միակողմանի փակ սահմանի բացումը: Այս սկզբունքով է ՀՀ արտաքին գերատեսչության կողմից մեկնարկել և ընթացել բանակցային ողջ գործընթացը, որի արդյունքում՝ 2009 թ. մարտ-ապրիլին համաձայնեցվեցին, իսկ հետագայում նախաստորագրվեցին արձանագրությունները: Վերջապես հոկտեմբերի 10-ին Ցյուրիխում այդ փաստաթղթի տակ իրենց ստորագրությունները դրեցին Հայաստանի ու Թուրքիայի արտգործնախարարները:

Ինչ վերաբերում է թուրք և ազերի քաղաքական գործիչների ու պաշտոնյաների այն հայտարարություններին, թե Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորումը կապված է դարաբաղյան հիմնախնդրի հանգուցալուծման և բանակցային գործընթացի հետ, ապա դրանք անհիմն են, քանզի միանգամայն հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման բանակցությունների ընթացքում այդ հարցը երբևէ քննարկման առարկա չի եղել: Թուրքական կողմը հիրավի չի կարող անկողմնակալ միջնորդ լինել Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորման հարցում:

Այն, որ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը և դարաբաղյան հիմնահարցը երբեք չեն կարող զուգորդվել և միմյանցով պայմանավորել, քանիցս հայտարարել են ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները՝ որպես իրենց կառավարությունների պաշտոնական դիրքորոշում: Այդ մասին հայտարարել են նաև ԱՄՆ և ՌԴ արտգործնախարարները, եվրոպական կառույցների ղեկավարները:

«Այս հարաբերությունները որևէ ձևով չեն առնչվում ու չեն կարող առնչվել Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման հետ, որն անկախ և ինքնուրույն գործընթաց է, ինչի մասին բազմիցս խոսել են ինչպես ԵԱԿԿ Մինսկի խմբի համանախագահ երկրները, այնպես էլ Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացում միջնորդի առաքելություն կատարող միջազգային կազմակերպություններն ու միջնորդ երկրները»,- ասված է ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հոկտեմբերի 10-ի ուղերձում:

Հստակ ընդգծվեց նաև, որ «Թուրքիայի հետ որևէ հարաբերության հաստատում չի կարող կասկածի տակ դնել հայ ժողովրդի հայրենագրկման և Ֆեղասպանության իրողությունը»:

Դրա մասին է վկայում նաև միջազգային հեղինակավոր փորձագիտական շրջանակների հրապարակումն առ այն, որ «Հայաստանը փաստորեն մերժել է Թուրքիայի ղեկավար անձանց այն ցանկությունը, համաձայն որի՝ երկրի խորհրդարանը վավերացնելու է արձանագրությունները միայն այն ժամանակ, երբ առաջընթաց կտեսնեն Լեռնային Ղարաբաղի շուրջ Ադրբեջանի հետ ընթացող բանակցություններում»:

Ս.թ. հոկտեմբերի 10-ին Հայաստանի և Թուրքիայի արտգործնախարարներ Է. Նալբանդյանը և Ա. Դավութլյուն Ցյուրիխում ստորագրեցին երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման ու Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների զարգացման մասին արձանագրություններ: Օտարերկրյա բարձրաստիճան պաշտոնյաների (ԱՄՆ պետքարտուղար Ջիլարի Բլինքոն, Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրով, Ֆրանսիայի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավար Բեռնար Կուշներ, Եվրոպական Միության խորհրդի գլխավոր քարտուղար Խավիեր Սոլանա, Եվրախորհրդի նախարարների կոմիտեի նախագահ, Սլովենիայի ԱԳ նախարար Սամուել ժրոզար) ներկայությունը ստորագրման արարողությանը վկայում է այն մասին, որ միջազգային հանրությունը կարևորում և անթաքույց աջակցում է հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանն ու հարաբերությունների հետագա զարգացմանը՝ որպես անկախ գործընթացի:

Ստորագրումից հետո աշխարհի շատ երկրներ ու միջազգային կազմակերպություններ հանդես են եկել պաշտոնական հայտարարություններով, որոնցում սատարում ու պաշտպանում են Հայաստանի ու Թուրքիայի միջև հարաբերությունների կարգավորման վերաբերյալ փաստաթղթերի ստորագրումն ու դրույթների իրականացումը, սակայն նրանցից և ոչ մեկը (իհարկե բացի Ադրբեջանից ու Թուրքիայից) չի

նշում և անգամ չի ակնարկում դարաբաղյան հիմնահարցի կարգավորման գործընթացի հետ որևէ փոխկապակցություն:

«Թուրքիայի կողմից արձանագրությունների վավերացման ձգձգումը կամ վավերացումից հետո որևէ պայմանների, լրացուցիչ պայմանների ներկայացումը, որոնք արժարժված չեն արձանագրությունների մեջ, կարող են խոչընդոտել ողջ գործընթացը, քանի որ այս արձանագրությունները ստորագրվել են բանակցությունների արդյունքում, որտեղ որևէ այլ հարց, բացի նրանից, ինչ որ ներառված է արձանագրությունների մեջ, չի քննարկվել» (ՀՀ նախագահի հոկտեմբերի 10-ի ուղերձից):

Ինչպես Թուրքիայում, այնպես էլ Ադրբեջանում հստակ գիտակցում են, որ եթե կողմերից որևէ մեկը փորձի արհեստականորեն ձգձգել կամ ինչ-որ կերպ հավելյալ նախապայմաններով խոչընդոտել արձանագրությունների ժամանակին վավերացումը, ապա բացասական հետևանքների ու խնդրի ծախսողման ողջ պատասխանատվությունը միջազգային հանրության առջև ստանձնելու է հենց նա:

Ի վերջո և՛ Ադրբեջանում, և՛ Թուրքիայում հիմնալի հասկանում են, որ հայ-թուրքական արձանագրությունների վավերացումը դարաբաղյան հիմնահարցի կարգավորման գործում զիջումներ կորզելու անհեռառես քաղաքականության հետ կապելը ի սկզբանե դատապարտված է ծախսողման և կիստաճգի ինչպես հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը, այնպես էլ դարաբաղյան հիմնահարցի բանակցային գործընթացը:

**Արամ Հարությունյան
դոցենտ**

Ցեսակետ 2

Արձանագրություններում Լեռնային Ղարաբաղի հիմնահարցն ի սկզբանե ապահովագրված է շահարկվելուց, քանզի բանակցությունների հիմքում հայկական կողմը դրել է առանց նախապայմանների հարաբերություններ հաստատելու հարցը:

Այսօր հասարակության մեջ առկա են մտահոգություններ առ այն, որ Թուրքիան կարող է Ղարաբաղյան հիմնահարցում հայկական կողմի նկատմամբ դիմել ճնշումների: Այստեղից բխում է հարցադրում, թե ընդհանրապես արժե՞ հարաբերություններ հաստատել Թուրքիայի հետ:

Հարկ է նշել, որ դիվանագիտական փոխհարաբերություններ Հայաստանի և Թուրքիայի միջև հաստատված եղել են մաս ոչ վաղ անցյալում՝ Հայաստանի Առաջին Հանրապետության տարիներին՝ 1918-1920 թթ.: Նույն շրջանում դիվանագիտական փոխհարաբերություններ եղել են մասնա Հայաստանի ու Ադրբեջանի միջև:

Սակայն, հայոց դիվանագիտության ողջ պատմության ընթացքում երկուստեք փոխհարաբերություններում Թուրքիան թելադրողի դիրքերում է եղել (1918 թ. հունիս՝ Բաթում, 1920 թ. դեկտեմբեր՝ Ալեքսանդրապոլ, 1921 թ. հոկտեմբեր՝ Կարս): խորհրդային Հայաստանն իր գոյության ընթացքում զրկված է եղել ինքնուրույն արտաքին քաղաքականություն վարելու հնարավորությունից, ուստի՝ Հայաստանի և Թուրքիայի միջև դիվանագիտական փոխհարաբերությունները միջնորդավորված են եղել և կրել են խորհրդային իշխանությունների թելադրանքի կնիքը:

Թուրքիան Հայաստանի անկախությունը, ինչպես և 1918 թ., առաջիններից մեկը ճանաչեց, սակայն Ղարաբաղյան հիմնախնդրի հարցում Հայաստանի և Արցախի վրա ճնշում գործադրելու, ՀՀ տնտեսական զարգացումը խափանելու, արտաքին աշխարհի հետ կապը խզելու նպատակով 1993 թ. նրան ենթարկեց շրջափակման: 90-ականներից առ այսօր հայկական անկախ պետականության կայացումը հնարավորություն է ընձեռում հանդես գալու արտաքին քաղաքական որոշ նախաձեռնություններով:

Հայկական դիվանագիտության հաջողություններից մեկն այն է, որ Թուրքիայի Հանրապետության հետ հավասարը հավասարի հարաբերություններ կառուցելու, տնտեսական և հաղորդակցական շրջափակումից դուրս գալու քաղաքականությունը ստացավ միջազգային հանրության աջակցությունը՝ բացառելով Ղարաբաղյան հիմնահարցի շահարկումը:

Այսօր Թուրքիան փորձում է Ադրբեջանի և իր ներքին սպառնալու համար շահարկել Ղարաբաղյան հիմնախնդիրը: Թուրքական կողմը, գիտակցելով, որ արձանագրություններում նախապայմանները բացառվել են, նշում է, թե թուրքական խորհրդարանը չի վավերացնի արձանագրությունները, եթե Հայաստանն ու Ադրբեջանը Ղարաբաղյան հիմնահարցում չզան փոխհամաձայնության: Այդպիսի հայտարարություն արել էր Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը Լոնդոնում կայացած G20-ի գագաթաժողովում:

Մինչդեռ Հայաստանի նախագահը բազմիցս (30 սեպտեմբերի 2009 թ.՝ «Հանրային խորհրդի քննարկում», 10 հոկտեմբերի 2009 թ.)

երկրի ղեկավարի ուղերձը) շեշտել է այն հանգամանքը, որ Հայաստանի և Թուրքիայի միջև արձանագրություններում որևէ տող չկա և չէր էլ կարող լինել Ղարաբաղյան հիմնահարցի մասին:

Այդ հիմնախնդրի լուծման ուղղությամբ Հայաստանի Հանրապետությունը հանդես է գալիս Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հստակեցման դիրքերից:

Հայկական դիվանագիտության ձեռքբերումներից մեկն էլ այն է, որ Մոսկովյան համաձայնագիրը (2 նոյեմբերի 2008 թ.) ցուցում է. Ղարաբաղյան հիմնահարցի կարգավորումը պետք է ընթանա միայն խաղաղ (քաղաքական) ճանապարհով՝ ի հակադրություն Ադրբեջանի սպառնալիքների և ռազմատենչ հայտարարությունների:

Հայկական կողմից արձանագրությունների չվավերացման պարագայում Հայաստանը կարող է կորցնել վստահությունը միջազգային հարաբերություններում, իսկ Ղարաբաղյան հիմնահարցի քաղաքական (խաղաղ) կարգավորման հնարավորությունը կարող է լրջորեն տուժել:

*Ալիկ Ղարիբյան
պատմական գիտությունների թեկնածու*

**ԻՆՉ ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԻ
ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԸ**

Հայաստանի և Թուրքիայի միջև Յուրիխում ստորագրված արձանագրությունները սուր քննադատության են ենթարկվում թուրքական ընդդիմության, լրագրողների և մի շարք վերլուծաբանների կողմից, որոնք ուղղակիորեն մեղադրում են նախագահ Աբդուլլահ Գյուլին և վարչապետ Ռեջեփ Թայիբ Էրդողանին Հայաստանին զիջումների գնալու և «ադրբեջանցի եղբայրներին դավաճանելու» համար: Ընդդիմադիր ժողովրդահանրապետական կուսակցության ղեկավար Դենիզ Բայքալը և Ազգայնական շարժում կուսակցության առաջնորդ Դևլեթ Բահչելին հետևողականորեն դատապարտում են Թուրքիայի իշխանություններին՝ ընդգծելով, որ վերոհիշյալ արձանագրությունները չեն բխում Թուրքիայի ազգային շահերից, որ փաստաթղթերում բացակայում է «Ղարաբաղի հարցը», ինչն էլ, ինքնըստինքյան, ամհնար պետք է դարձներ երկխոսությունը Հայաստանի և Թուրքիայի միջև: Դենիզ Բայքալը նույնիսկ կարծիք է հայտնել, որ արձանագրությունների ստորագրումը լրջորեն վտանգում է Թուրքիա-Ադրբեջան հարաբերությունները, և թուրք-ադրբեջանական եղբայրական կապերը չպետք է դառնան «թուրքական կառավարության սխալի զոհը»: Նա նաև ասել է. «Յուլյոսովեք ինձ մի այնպիսի երկիր, որի եղբայրները գտնվում են պատերազմի մեջ, նրանց սպանում են, իսկ նրանք սեղմում են իրենց եղբայրների թշնամիների ձեռքը»:

Թուրքիայի և Հայաստանի հարաբերությունների կարգավորման նախապայմանների առաջադրման «փաստարկումը» կարծես թե ավանդական էր դարձել հիմնահարցով զբաղվող թուրք վերլուծաբանների համար, քանզի ԽՍՀՄ փլուզումից և Թուրքիայի Հանրապետության կողմից Հայաստանի Հանրապետության անկախության ճանաչումից հետո Թուրքիայում իշխանության եկած բոլոր կառավարությունները (Սուլեյման Դեմիրելի, Թանսու Չիլերի, Մեսութ Զըլմազի, Նեջմեթթին Էրբաքանի, Բյուլենթ Էջլիթի, Ռեջեփ Թայիբ Էրդողանի) Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման «զգայուն» կետը միշտ էլ, փաստորեն, դիտարկել են բացառապես թուրք-ադրբեջանական հարա-

բերությունների համատեքստում: Թուրք քաղաքական վերնախավի, գիտական ու լրագրողական ընտրանու ներկայացուցիչների զգալի մասը պարզապես չի կարող չկրել Հայաստանին նախապայմաններ առաջադրող նախկին հայտարարությունների ու հրապարակումների «բեռը»: Բնականաբար, այդ լրագրողներն ու վերլուծաբաններն այսօր նույնպես հայտարարում են, որ Թուրքիայի ներկայիս ղեկավարները և իշխող «Արդարություն և բարգավաճում» կուսակցությունն «արտաքին ուժերի ճնշման տակ» նահանջ են գրանցել Հայաստանի նկատմամբ ճնշումներ կիրառելու քաղաքականությունից՝ «հայկական ագրեսիայի դեմ միայնակ թողնելով եղբայրական Ադրբեջանին»: Միաժամանակ թուրքական ՁԼՄ-ները լայնորեն արձագանքում են ադրբեջանական ՁԼՄ-ներում շեփորվող հիասթափությանը, իսկ Ադրբեջանում քիչ չեն հրապարակումները, որոնք նպատակաուղղված են հաշտեցնելու սեփական հանրությանը այն մտքի հետ, որ որոշակի ձգձգումներից հետո ցյուրիխյան արձանագրությունները վերջիվերջո վավերացվելու են Թուրքիայի խորհրդարանի կողմից, քանի որ իշխող կուսակցությունն այնտեղ ունի ճնշող մեծամասնություն:

Հատկանշական է, որ Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանի բացման տնտեսական շահավետության հիմնավորմամբ ավանդաբար հանդես են գալիս թուրք-հայկական գործարար համաժողովի հիմնադիր-նախագահ Քաան Սոյաքը և փոխնախագահ Նոյան Սոյաքը: Սոյաք եղբայրներին ընդդիմախոսող թուրք վերլուծաբանները շարունակում են պնդել, որ Հայաստանը, հայոց սփյուռքի ներդրումներով հանդերձ, փոքր ու փակ երկիր է, Թուրքիան Հայաստանի հետ արդեն ունի առևտրական հարաբերություններ, որոնք իրականացվում են գլխավորապես Վրաստանի, նաև Իրանի միջոցով, իսկ եթե թուրքական ապրանքներն ուղղակիորեն մտնեն Հայաստան, ապա տեղի կունենա դրանց գների կտրուկ անկում, ինչը, սակայն, թուրքական ապրանքների նկատմամբ հայաստանյան շուկայի պահանջարկը էապես չի մեծացնի: Թուրք փորձագետների հաշվարկով Հայաստանի հետ թուրքական առևտրի ծավալը երբևէ չի գերազանցել 250 միլիոն ԱՄՆ դոլարը: Եթե հաշվի առնվի այն հանգամանքը, որ ավելի մեծ բնակչություն ունեցող Վրաստանի և Ադրբեջանի հետ Թուրքիայի առևտրի ծավալներն այս թվերից շատ չեն տարբերվում, ապա հայաստանյան շուկան թուրքական ընկերությունների համար առանձնապես գրավիչ չի կարող լինել, իսկ արևելյան շրջաններում զբաղվածության մակարդակի բարձրացման մասին խոսակցությունները խիստ չափազանցված են: Ըստ թուրք ընդդիմախոսների՝ սահմանի բացումից առավելապես օգտվելու են

Արևմուտքի վերազգային ընկերությունները և Հայաստանը: Եթե անգամ սահմանի բացումը կարող է աշխուժացնել արևելյան մի քանի քաղաքների առևտուրն ու արհեստները, ապա, ըստ ընդդիմախոսների՝ համեմատած մյուս արժեքային կորուստների դա շատ փոքր ձեռքբերում է:

Փաստորեն, Հայաստանի նկատմամբ վարվող քաղաքականության «զգայուն» հարցում նախապայմաններից հրաժարվելու մեջ մեղադրվող, ինչպես նաև Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման հովանավորների առջև պատասխանատվություն ստանձնած Թուրքիայի ղեկավարները չեն կարող չանել հայտարարություններ՝ մեղմելու սեփական հանրային տրամադրությունները, բայց, միևնույն է, այդ հայտարարությունների անկեղծությունը կրկին կասկածի տակ է դրվում թուրքական ընդդիմության կողմից:

*Ալեքսանդր Սաֆարյան
պատմական գիտությունների թեկնածու*

ԻՆՉՈ՛Ւ Է ԱՐԵՎՍՈՒՏՔԸ ԿՈՂՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԹՈՒՐԻԱՅԻ ՄԻՋԵՎ ՍԱՀՄԱՆԻ ԲԱՑՄԱՆԸ

Եվրոպական Միությունը և ԱՄՆ-ը միանշանակ կողմ են Հայաստանի և Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատմանն ու սահմանների բացմանը: Իհարկե, այս հարցում նույն դիրքորոշումն ունի նաև Ռուսաստանը: Եվեյցարիայում երկկողմ հարաբերությունների զարգացման մասին արձանագրության ստորագրման արարողությանը Ռուսաստանի Դաշնության արտգործնախարար Լավրովի, ԱՄՆ պետքարտուղար Քլինթոնի և Եվրոպական Միության բարձրաստիճան պաշտոնատար անձանց մասնակցությունն արդեն վկայում է, որ Ռուսաստանն ու արևմուտքը ոչ միայն կողմ են, այլև խիստ կարևորում են հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումն ու դիվանագիտական հարաբերությունների հաստատումը: Իսկ ո՞րն է նման դիրքորոշման պատճառը:

Առաջին հերթին անհրաժեշտ է նշել, որ ԵՄ-ն սկզբունքորեն է դեմ փակ սահմաններին, որ պետությանն ու որ տարածաշրջանին էլ դա վերաբերի: Նա ընդհանրապես չի ընդունում փակ սահմաններ աշխարհի ոչ մի ծայրում: Այս դիրքորոշումն առավել շատ տնտեսական հիմնավորում ունի, քան քաղաքական: Բանն այն է, որ ժամանակակից աշխարհը գլոբալացվող աշխարհ է: Տնտեսական ինտեգրացման գործընթացներին ընդգրկվել են բոլոր երկրներն ու ժողովուրդները, և այսօր փակ սահմանների առկայությունն ինքնին մեծ խոչընդոտ է ինտեգրացման ու գլոբալացման ճանապարհին: Ժամանակակից տնտեսական առաջընթացը պահանջում է բաց սահմաններ, բարենպաստ մաքսային ու հարկային ռեժիմներ, կապիտալների ու աշխատուժի ազատ տեղաշարժեր, այսինքն՝ այն, ինչ ներկայումս կա Եվրոպական Միության տարածքում:

Հայ-թուրքական սահմանի բացման գործում Արևմուտքի դրական դիրքորոշումը, նշված հանգամանքներից բացի, ունի նաև այլ դրդապատճառներ, որոնք պայմանավորված են ԱՄՆ-ի և Եվրոպական Միության հատուկ շահերով: Առաջին դրդապատճառն *էներգետիկ շահն է*: Բանն այն է, որ էներգետիկ անվտանգության ապահովումն առաջնային նշանակություն ունի ինչպես ԱՄՆ-ի, այնպես էլ միասնական Եվրոպայի համար: Վերջին տասնամյակների էներգետիկ ճգնաժամերն ապացույցե-

ցին, որ էներգետիկ անվտանգությունը պահանջում է ունենալ նավթի և գազի մատակարարման մի քանի այլընտրանքային աղբյուրներ: Մերձավոր Արևելքում պայթյունափայտ իրադրության պահպանումը և իրաքյան իրադարձությունները ցույց տվեցին, որ անհրաժեշտ է վերացնել Արևմուտքի կախվածությունը մերձավորարևելյան նավթից և Եվրոպայի գազամատակարարումն իրականացնել մի քանի ուղղություններով:

Էներգետիկ անվտանգության ապահովման նման հայեցակարգը վերջին ժամանակներում արևմտյան պետությունների քաղաքական դեկլար գործիչներին ստիպեց իրենց հայացքն ուղղել դեպի Կասպից ծովի և միջինասիական նավթային ու գազային պաշարները: Այդ նպատակով էր, որ կառուցվեց Բաքու-Ջեյհան նավթամուղը: Սակայն Բաքու-Ջեյհանը կառուցվեց Ռուսաստանի շահերի շրջանցմամբ և անցավ հակառուսական քաղաքականություն վարող Վրաստանի տարածքով: Հետխորհրդային տարածքում իր ազդեցությունը վերականգնող Ռուսաստանը, բնականաբար, այլևս չի հանդուրժում իր շահերի անտեսումը: Այսինքն՝ նոր նավթամուղների ու գազամուղների կառուցումն այսուհետ կարող է իրականացվել կամ Ռուսաստանի, կամ էլ այն պետությունների տարածքով, որոնց կրեմլը կտա իր համաձայնությունը:

Էներգակիրների նոր հոսքերի տեղափոխումը վրացական տարածքով բացառվում է ռուս-վրացական հակամարտության և Վրաստանի հակառուսական կոշտ դիրքորոշման պատճառով: Իրանի Իսլամական Հանրապետության և ԱՄՆ-ի միջև հակամարտության պատճառով անհնար է իրանական տարածքի օգտագործումը: Ռուսաստանի տարածքով էներգակիրների տեղափոխումն անցանկալի է Եվրոպայի համար, որովհետև այնտեղ դեռ չեն մոռացել ռուս-ուկրաինական «գազային պատերազմի» հետևանքները 2008-2009 թթ. ձմռանը: Դժվար է ասել նաև, թե որքան կարող է ձգվել Արևմուտքի հետ իսլամական Իրանի հակամարտությունը: Միջազգային քաղաքական այսպիսի իրադրության պայմաններում մերձկասպյան էներգակիրների տեղափոխման հավանական ուղի կարող է դիտվել Ադրբեյջանով Հայաստան և այստեղից էլ Թուրքիայի տարածքով դեպի Եվրոպա գնացող ուղին: Իհարկե, նման զարգացումները կարող են մեծապես շահավետ լինել նաև Հայաստանի համար: Այսպիսով՝ կարող ենք եզրակացնել, որ Արևմուտքի շահագրգռվածությունը հայ-թուրքական սահմանի բացման գործում պայմանավորված է նաև էներգետիկ անվտանգության ապահովման քաղաքականությամբ:

Բացի էներգետիկ և տնտեսական դրդապատճառներից՝ Արևմուտքն ունի նաև որոշակի **ռազմաքաղաքական շահեր**: Հայ-թուրքական սահմանի բացումը, անշուշտ կարող է նպաստել Հարավային Կով-

կասում թուրքական ազդեցության ամրապնդմանը, որի վառ վկայությունն է Թուրքիայի կողմից առաջարկված Կովկասյան պակտի նախագիծը: Թուրքիան ՆԱՏՕ-ի անդամ է, և նրա դիրքերի ամրապնդումը տարածաշրջանում բնականաբար համահունչ է նաև ԱՄՆ-ի և նրա եվրոպական հյուսիսատլանտյան դաշնակիցների շահերին, եթե նկատի ունենանք նաև թուրքական գործոնի գերկարևորությունն ամերիկյան արտաքին քաղաքականության համար: Սակայն այս հանգամանքը որևէ մտահոգության տեղիք չպետք է տա, որովհետև Հայաստանն ընդգրկված է ՆԱՏՕ-ի հետ համագործակցության ծրագրերում՝ դառնալով նրա հուսալի գործընկերը տարածաշրջանում: Հայաստանը նաև Հավաքական անվտանգության պայմանագրի անդամ է, Ռուսաստանի միակ ռազմավարական դաշնակիցը հարավկովկասյան տարածաշրջանում և իր ազգային անվտանգությանը սպառնացող մարտահրավերները կարող են չեզոքացնել նաև Ռուսաստանի հետ ռազմաքաղաքական համագործակցությամբ, եթե, իհարկե, Ղարաբաղյան հակամարտությանն առնչվող նման վտանգ ապագայում ի հայտ գա:

Արևմուտքն աջակցում է Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորմանը նաև միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացման համար: Երկու հարևան պետություններն այսօր ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի, Եվրոպայի խորհրդի, Եվրամանտլանտյան գործընկերության խորհրդի և Սևծովյան տնտեսական համագործակցության անդամ են: Նույն միջազգային կառույցներում գտնվելն անտրամաբանական է դարձնում Հայաստանի և Թուրքիայի միջև դիվանագիտական-միջպետական հարաբերությունների բացակայությունը: Դա որոշակիորեն խոչընդոտում է այս հզոր միջազգային կառույցների գործունեությունը Հայաստանին և Թուրքիային հարող տարածաշրջաններում: Ուստի՝ լրիվ հասկանալի է Արևմուտքի դիրքորոշումը. **եթե անդամակցում ես այն միջազգային կազմակերպություններին և ծրագրերին, որտեղ նաև ընդգրկված է քո հարևան պետությունը, բարի եղիր նաև նրա հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատել, հակառակ ուղղակի անընդունելի է և անհասկանալի**: Հայաստանն ու Թուրքիան այլևս չեն կարող այս տրամաբանությանը հակառակ գործել, որովհետև Եվրոպական Միությանն անդամակցելը վաղուց արդեն ամրագրված է ինչպես Թուրքիայի, այնպես էլ Հայաստանի արտաքին քաղաքական դրույթներում ու ազգային անվտանգության ռազմավարության ծրագրերում:

Գարիկ Քեռյան

քաղաքական գիտությունների դոկտոր

**ԱՐԴՅՈ՞Ք ՀԱՅ-ԹՈՒՐԿԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՆԱԽԱՏԵՍԱՎՈՂ
ՄԻՋԱՄԱԿԱՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ
ԶԲԱՂՎՈՂ ԵՆԹԱՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՍՏԵՂԾՄԱՍԲ ԿԱՍԿԱԾԻ ՏՎԿ Է
ԴՐՎՈՒՄ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԸ**

Հայաստանի և Թուրքիայի միջև ստորագրված արձանագրություններում առկա որոշ կետեր մտահոգություններ են առաջացրել և՛ Հայաստանում, և՛ Թուրքիայում, որոնցից մեկն էլ նախատեսվող միջկառավարական հանձնաժողովում պատմության հարցերով զբաղվող ենթահանձնաժողովի ստեղծումն է:

Նախ հիշենք, որ ստորագրված արձանագրություններով նախատեսվում է ստեղծել միջկառավարական հանձնաժողով, որը բաղկացած կլինի յոթ ենթահանձնաժողովներից՝ քաղաքական, ճանապարհային, հաղորդակցության, էներգետիկ և ենթակառուցվածքների, իրավական, գիտության և կրթության, առևտրի, զբոսաշրջության և տնտեսական համագործակցության, բնապահպանական, պատմության հարցերի: Ահա հենց այս վերջին ենթահանձնաժողովի ստեղծումը շատերը կապում են Հայոց ցեղասպանության հարցի հետ: Սակայն մեզ համար հստակ է, որ Ցեղասպանության եղելության փաստը երբեք քննարկման առարկա չի կարող լինել: Այս մասին բազմիցս հայտարարել են հայաստանյան իշխանությունները: Մասնավորապես՝ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը հոկտեմբերի 10-ի իր ուղերձում հստակ առանձնացրեց չորս կետ, որոնք առավել մտահոգություններ էին առաջացրել մեզանում, և հատուկ շեշտեց. «Ցանկացած հարաբերություն Թուրքիայի հետ չի կարող կասկածի տակ դնել հայ ժողովրդի հայրենագրկման ու Ցեղասպանության իրողությունը: Միջկառավարական հանձնաժողովի համապատասխան ենթահանձնաժողովը պատմաբանների հանձնաժողով չէ»:

Իսկ Թուրքիայում իշխանությունը փորձում է այս ենթահանձնաժողովը ներկայացնել որպես մի օղակ, որն իբրև թե քննելու է Հայոց ցեղասպանության եղելության փաստը: Սակայն հարկ է նկատել, որ նման ենթահանձնաժողովի ստեղծման հանգամանքը լուրջ քննադատության է ենթարկվում նաև Թուրքիայում: Խնդիրն այն է, որ Թուրքիայում պե-

տական մակարդակով տասնամյակներ շարունակ քարոզվել է, որ Հայոց ցեղասպանությունը սուտ է, նման բան չի եղել: Այս նպատակով գրվել են բազմաթիվ «գիտական գրքեր», ստեղծվել են Ցեղասպանությունը ժխտող հատուկ կառույցներ և այլն: Հիմնվելով այս ամենի վրա՝ թուրքական ընդդիմությունը հարց է բարձրացնում, թե ի՞նչ են քննելու թուրքերն այդ ենթահանձնաժողովի շրջանակներում, մի թե այն Ցեղասպանությունը, որը տեղի չի ունեցել: Եվ այդ պարագայում ի՞նչ պատասխան են տալու այն բազմամիլիոն հանրությանը, որին տասնամյակներ շարունակ քարոզել են հակառակը:

Ինչպես ցույց են տալիս մեր անձնական շփումները թուրքական քաղաքական, քաղաքագիտական, հասարակական տարբեր շրջանակների հետ, Թուրքիան, իրատեսորեն մոտենալով հարցին, ի վերջո հասկացել է, որ հայկական կողմի համար Ցեղասպանությունը կասկածի ենթարկելու և կամ այն հերքելու ցանկացած քայլ անընդունելի է, ուստի՝ թուրքական կողմը հարցը կարող է արժարծել միայն պոպուլիստական հռետորաբանության շրջանակներում:

Կարևոր և ուշադրության արժանի հանգամանք է միջկառավարական հանձնաժողովի ձևավորման և նրա ձևաչափի հարցը, որը դեռևս կանոնակարգված չէ: Հայաստանի և Թուրքիայի միջև երկկողմ հարաբերությունների զարգացման մասին արձանագրությունում հստակ նշված է, որ «Միջկառավարական հանձնաժողովի և նրա ենթահանձնաժողովների աշխատանքների մշակման նպատակով սույն արձանագրության ուժի մեջ մտնելու հաջորդ օրվանից 2 ամիս անց կստեղծվի աշխատանքային խումբ՝ երկու արտգործնախարարների ղեկավարությամբ: Սույն արձանագրության ուժի մեջ մտնելուց հետո 3 ամսվա ընթացքում այդ աշխատանքները կհաստատվեն նախարարական մակարդակով»: Այսինքն՝ դեռևս մշակված չեն աշխատանքները, և հստակ չէ, թե ի՞նչ բովանդակություն են ունենալու այդ ենթահանձնաժողովների օրակարգն ու թեմաները: Այս խնդիրն ուղղակիորեն շաղկապված է Հայոց ցեղասպանության հարցի քննարկման մասին երկու երկրներում էլ շրջանառվող վարկածների հետ. մասնավորապես սպասելի է, որ թուրքական կողմը փորձելու է օրակարգ մտցնել Հայոց ցեղասպանության հարցը, իսկ հայկական կողմը հայտարարել է, որ Ցեղասպանության իրողությունը երբևէ չի կարող լինել քննարկման առարկա: Այսինքն՝ մշակվելիք աշխատանքների հրապարակումից հետո միայն պարզ կդառնա, թե ինչպես են ձևավորվելու ենթահանձնաժողովների օրակարգերը, ինչ թեմաներ և ինչպիսի ձևակերպումներով են դառնալու քննարկման առարկա: Ուստի՝ վաղ է հայտարարել, որ պատմության

հարցով զբաղվող ենթահանձնաժողովը քննարկելու է Ցեղասպանության հարցը, ինչպես պնդում են թուրքերը, քանի որ ստեղծվելու է մանրեղու լայն դաշտ, ու հայկական կողմը պետք է ձգտի այդ ամենը տանել իրեն ձեռնտու և ընդունելի ուղղությամբ:

Արձանագրության մեջ պատմության հարցով զբաղվող ենթահանձնաժողովի վերաբերյալ տեղ գտած ձևակերպումը բավականին լայն է ու թույլ է տալիս կատարել տարբեր մեկնաբանություններ. «Իրականացնել երկու ժողովուրդների միջև փոխվստահության վերականգնմանն ուղղված պատմական հարթության երկխոսություն, այդ թվում՝ պատմական փաստաթղթերի և արխիվների գիտական, անկողմնակալ ուսումնասիրության միջոցով գոյություն ունեցող խնդիրների հստակեցման ու առաջարկների ձևակերպման համար»: Մեր կարծիքով՝ երկու ժողովուրդների միջև փոխվստահությանն ուղղված քայլերից կարող է լինել հենց Ցեղասպանության հետևանքների վերացումը, որոնք բազմաթիվ են: Օրինակ՝ որպես Ցեղասպանության հետևանք կարելի է դիտարկել Պատմական Հայաստանի տարածքում մշակութային ժառանգության կործանումը: Մեր եկեղեցիները մինչ օրս համապատասխան կառույցներում գրանցված չեն որպես հայկական եկեղեցի, չեն պատկանում Հայ առաքելական եկեղեցու Պուսի պատրիարքարանին: Ի դեպ, արձանագրության մեջ հստակ նշվում է, որ կողմերը պարտավորվում են «աշխատանք տանել երկու կողմերի մշակութային ժառանգության պահպանման նպատակով»: Ցեղասպանության հետևանքների վերացման շարքում տեսականորեն կարելի է դասել նաև այն, որ անհրաժեշտ է համապատասխան միջավայր ստեղծել Ցեղասպանության տարիներին իրենց արմատից բռնի օտարված, ուծացված հայերի սերունդների համար, որպեսզի նրանք կարողանան վերագտնել իրենց էթնիկ ինքնությունը:

Բացի այդ, կան բազմաթիվ այլ հարցեր, որոնք ուղղակիորեն կապված են հայ և թուրք հասարակությունների միջև վստահության կորստի հետ, որի ուղղությամբ նույնպես նախատեսվում են աշխատանքներ: Այդ ամենի համատեքստում չի բացառվում, որ ի հայտ գան Թուրքիայի պատմության լավ չլուսաբանված էջեր, արխիվային այնպիսի փաստաթղթեր, որոնք ցույց կտան արդեն հանրապետական Թուրքիայի հակաիրավական քաղաքականությունը հայերի նկատմամբ:

Քննադատության է ենթարկվում նաև այն դրույթը, համաձայն որի՝ պատմական հարցերով ենթահանձնաժողովի աշխատանքներին կարող են մասնակցել օտարերկրյա մասնագետներ: Սակայն արձանագրությունների մեջ այդ մասնագետներին ներգրավելու մասին նույնպես

հստակ նշված է. «Ըստ անհրաժեշտության՝ միջազգային փորձագետները կմասնակցեն ենթահանձնաժողովների աշխատանքներին»: Իսկ անհրաժեշտությունը կմշակվի և կորոշվի աշխատանքներում, որտեղ կողմերից յուրաքանչյուրը կունենա իր իրավունքները, և հարցը կլուծվի երկկողմ համաձայնությամբ:

Վերջում հարկ է նշել նաև, որ միջկառավարական հանձնաժողովի գաղափարը նոր չէ հայկական արտաքին քաղաքականության օրակարգում: Մասնավորապես՝ 2005 թ. Թուրքիայի վարչապետ Էրդողանը նամակ էր հղել ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանին՝ առաջարկելով ստեղծել պատմաբանների հանձնաժողով և քննարկել Ցեղասպանության հարցը: Իր պատասխան մամակում նախագահ Քոչարյանն ասել էր, որ նախ պետք է հարաբերություններ հաստատել, իսկ հետո՝ միջկառավարական հանձնաժողով ստեղծել, որը կարող է անդրադառնալ տարատեսակ հարցերի: Սա թույլ է տալիս ենթադրելու, որ նման մոտեցումը և Հայաստանի որդեգրած սկզբունքային դիրքորոշումների զինանոցի տարրերից է:

*Ռուբեն Մելքոնյան
քառասիրական գիտությունների թեկնածու*

**ՈՐՈՂՔ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԹՈՒՐԻԱՅԻ ՄԻՋԵՎ
ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԿՏԱԿԱՎՈՐ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ**

Տեսակետ 1

Հայ-թուրքական սահմանի բացումը տնտեսագիտական առումով նախ և առաջ կարևորվում է արտաքին առևտրի տեսանկյունից:

Այսօր Հայաստանը Թուրքիայի հետ արտաքին առևտուր փաստացի կատարում է և՛ օդային, և՛ ցամաքային ուղիներով: Սակայն իրողությունն այն է, որ Թուրքիայի հետ մեր առևտրատնտեսական հարաբերությունները պետականորեն չեն կարգավորվում: Արդյունքում՝ Հայաստանի արտաքին առևտրում Թուրքիան որոշակի դերակատարություն ունի, սակայն ներազդել դրա վրա չենք կարող (չենք կարող կիրառել մաքսեր, քանակական սահմանափակումներ և արտաքին առևտրի կարգավորման այլ լծակներ):

Եթե Հայաստանի և Թուրքիայի միջև առևտուրը լինի օրինական ճանապարհով և ուղիղ կապով, ակնհայտ է, որ կնվազեն տրանսպորտային ծախսերը, և կիջնեն ապրանքների գները: Այստեղ պետք է նշել, որ ներքին արտադրողներին պաշտպանելու խնդիր կառաջանա: Իսկ դրա համար երկու երկրների միջև պետք է լինի առևտրատնտեսական պայմանագիր, և դրան համապատասխան իրականացվի հատուկ պետական արտաքին առևտրային քաղաքականություն:

Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, մեծ երկրների հետ համագործակցությունը և արտաքին առևտրային ճիշտ քաղաքականությունը փոքր երկրներին զարգանալու հնարավորություն են տալիս: Դրա օրինակն են Հոնկոնգը, Սինգապուրը, Հարավային Կորեան և այլն:

Բացի այդ, կարևոր է նշել, որ Թուրքիան և Հայաստանը առևտրի համաշխարհային կազմակերպության անդամ են, որի հիմնական առաքելությունն է՝ կարգավորել երկրների միջև առաջացած առևտրային խնդիրները, ապահովել արդար առևտուրը, իսկ անհրաժեշտության դեպքում կիրառել նաև պատժամիջոցներ:

*Թորոս Թորոսյան
տնտեսական գիտությունների դոկտոր*

Տեսակետ 2

Ժամանակակից գլոբալացման պայմաններում տնտեսական զարգացման ձգտող ցանկացած պետության համար դժվար է լուրջ նվաճումներ արձանագրել առանց արտաքին տնտեսական կապերի և ապրանքաշրջանառության: Իսկ արտաքին առևտրաշրջանառության համար կարևորագույն հանգամանք են հարևան երկրների հետ առևտրական փոխհարաբերությունները, միմյանց տրանսպորտային հաղորդակցության ուղիների օգտագործումը:

Այսօր Հայաստանի Հանրապետության արտաքին ապրանքաշրջանառության գերակշիռ մասն իրականացվում է կամ Վրաստանի նավահանգիստներով և ցամաքային տրանսպորտային ուղիներով, կամ էլ օդային ճանապարհով: Ամբողջ հզորությամբ չի օգտագործվում հարևան պետությունների հետ առևտրատնտեսական հարաբերությունների ողջ ներուժը, որը զարգացման մեծ հեռանկարներ ունի: Թուրքիան իր տնտեսական զարգացման ցուցանիշներով աշխարհում առաջին քսանյակի մեջ է մտնում, և Թուրքիայի հետ փակ սահմանը, անշուշտ, իր բացասական ազդեցությունն է թողնում Հայաստանի տնտեսական ցուցանիշների վրա:

Ներկայումս ապրանքափոխադրումների տրանսպորտային ծախսերը ՀՀ-ում կազմում են ապրանքի ընդհանուր արժեքի շուրջ 20%-ը, ինչը գնազույացնող կարևոր գործոն է: Այսօր Հայաստանի տրանսպորտային փոխադրումների ծախսերն աշխարհում ամենաբարձրների թվին են դասվում: Վրաստանի նավահանգիստներից օգտվելիս Հայաստանը միջծովային բեռնափոխադրումների համար վճարում է շուրջ տասն անգամ ավելի, քան կվճարեր Միջերկրական ծովի նավահանգիստներից օգտվելու պարագայում, քանի որ Սև ծովում օվկիանոսային նավեր չեն երթևեկում: Ընդ որում՝ Թուրքիայի հետ բաց սահմանի դեպքում մեծանալու է մրցակցությունը տրանսպորտային ծառայությունների մատուցման ոլորտում, ուստի՝ անխուսափելի են տրանսպորտային գների նվազման միտումները:

Վերլուծելով հայ-թուրքական սահմանի բացման զուտ տնտեսական կողմը՝ կարող ենք նշել, որ համատնտեսական կտրվածքով այն ավելի էական դրական ազդեցություն կարող է թողնել Հայաստանի տնտեսության վրա: 2007 թ. Թուրքիայի արտահանման ծավալները կազմել են 106.9 միլիարդ դոլար, ներմուծումը՝ 168.5 միլիարդ դոլար: Հայաստանի համար նշված ցուցանիշները համապատասխանաբար կազմել են 1.2 և 3.3 միլիարդ դոլար:

Թուրքիայի համար սահմանի բացումն էական նշանակություն ունի իր արևելյան շրջանների տնտեսական աշխուժացման տեսակետից, քանի որ համաձայն փորձագիտական գնահատականների՝ Թուրքիայի արևելյան շրջաններում բնակչության գնողունակության մակարդակը շուրջ 5 անգամ զիջում է Թուրքիայի և շուրջ 2 անգամ Հայաստանի միջին մակարդակը։ Սահմանի բացումը Թուրքիայի արևելյան շրջաններում անշուշտ տնտեսական աշխուժացում կառաջացնի։

Սահմանները բացելու դեպքում կարճ ժամկետում Հայաստանի տնտեսության մեջ զգալի փոփոխություններ բնավ չեն արժանագրվի, մեծ ներդրումներ նույնպես պետք չէ ակնկալել, սակայն միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածում Հայաստանը հնարավորություն կունենա համալրել ներքին ռեսուրսները և ավելի մրցունակ գներով ու ապրանքների ավելի ընդգրկուն ցանկով ներկայանալ եվրամիության շուկայում։ Թուրքիայի և Հայաստանի միջև ապրանքաշրջանառության ծավալները կաճեն, քանի որ այն այլևս միջնորդավորված բնույթ չի կրի։ Արդյունքում՝ թուրքական ապրանքի գները մեր ներքին շուկայում զգալի կնվազեն։ Միաժամանակ հայաստանյան արտահանողները հնարավորություն կունենան առանց միջնորդների ուսումնասիրել թուրքական շուկայի հնարավորությունները և պահանջները, ապրանքային այն ոլորտները, որտեղ հնարավորություններ ունենք մրցունակ լինելու՝ իրատեսորեն գնահատելով մեր արտադրական ներուժի արդյունավետ օգտագործման հնարավորությունները։

*Սերյոժա Խաչատրյան
տնտեսական գիտությունների թեկնածու*



ՈՐՈՂՔ ԵՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀԱՅ-ԹՈՒՐԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հետխորհրդային շուրջ երկու տասնամյակների ընթացքում ՌԴ-ի Անդրկովկասյան քաղաքականությունը զգալի «համադրությանին» փոխակերպումների ենթարկվեց։ Դա մասնավորապես վերաբերում է տարածաշրջանային գործընթացների ուղղորդման «աշխատանքային սկզբունքներին», որոնք ընկած էին ՌԴ գործնական քաղաքականության հիմքում։ Այդ փոխակերպման չափորոշիչներն առարկայական դարձան 2000-ական թթ. կեսերին՝ արտացոլելով ինչպես ռուսաստանյան ղեկավար քաղաքական վերնախավի շրջանում տեղ գտած նոր հայեցակարգային մոտեցումները, այնպես էլ ավելի լայնածավալ միջազգային վերադասավորումները և դրանց ուղղակի կամ անուղղակի ներազդեցություններն Անդրկովկասի երկրների վրա։

Սկզբնական շրջանում ռուսաստանյան ռազմավարության հենքում ընկած էր, այսպես կոչված, «կոնֆլիկտային» քաղաքականությունը, որը ենթադրում էր ՌԴ տարածաշրջանային ներկայության բավականաչափ կարծր սխեմա և գործնական կոշտ «աշխատանքային սկզբունքներ»։ Հիշյալ համադրությանի հիմնական ուժագծերի հիմքում ընկած էր ԽՍՀՄ կազմալուծումից հետո հետխորհրդային ողջ աշխարհաքաղաքական գոտում ստեղծված status quo-ի պահպանումը և այս աշխարհամասում «երրորդ» ուժերի ակտիվ ներգրավման հնարավորինս կասեցումը, որը, ի թիվս այլոց, սպառնալից էր համարվում ԱՊՀ շրջանակներում ռուսաստանակենտրոն համախմբման տեսանկյունից։ Արտաքին քաղաքական և արտաքին տնտեսական ռեսուրսային բազայի սակավության և համապատասխանաբար տարածաշրջանային ներգործության ճկուն գործիքների բացակայության պայմաններում Մոսկվայի «կոնֆլիկտային» քաղաքականությունը միտված էր լուծելու տարածաշրջանային լայն խնդիրներ՝ ԱՊՀ-ի (ներառյալ՝ ՀՀ-ի և Վրաստանի) արտաքին սահմանների պաշտպանություն, հակամարտությունների կարգավորման գործում ՌԴ-ի բացառիկ դերի ապահովում, միանձնյա խաղաղապահություն, տարածաշրջանային երկրների՝ ՌԴ-ի զուտ քաղաքական շահերի հանդեպ չեզոքության ապահովում։

Այս մոտեցումներն աստիճանաբար, բայց և այնպես էականորեն փոխվեցին վերջին գրեթե 10 տարիների ընթացքում: Ներկայումս հիմքեր կան ենթադրելու, որ հետխորհրդային տարածքում իր ազդեցության ուժեղացումը Ռուսաստանն այլևս ընկալում է ոչ իբրև հայեցակարգային ու ինքնամպատակ, այլ գլոբալ դիրքերը հզորացնելու միջոց: 2005 թ. Դաշնային ժողովին ուղղված ուղերձում Վ. Պուտինն ազդարարեց «ԱՊՀ տարածքում ընթացող սոցիալ-տնտեսական ու քաղաքական գործընթացները Ռուսաստանում ընթացող համանման գործընթացների հետ համահունչ դարձնելու» ռազմավարական նպատակի մասին: Սակայն դա ամենևին էլ չի նշանակում, որ Մոսկվան ձգտում է մշակել ինչ-որ նոր համընդհանուր սխեմաներ ԱՊՀ ինստիտուցիոնալ միասնականությունը պահպանելու համար: Երկկողմանի «ձևաչափում» հարցեր լուծելու միտումն ակնհայտ նախապատվություն է ստացել, մինչդեռ ԱՊՀ-ում ՌԴ քաղաքականության որոշիչ գործոններն ու նպատակները միաժամանակ պայմանավորված են երկու փոփոխականներով՝ շահութաբերությամբ ու տվյալ երկրի քաղաքական չեզոքությամբ:

Գործնական քաղաքականության մեջ բյուրեղացան մի քանի կարևոր միտումներ, այդ թվում՝ ֆոկուսացված-նպատակային քաղաքականության իրականացում ԱՊՀ անդամ պետություններում ենթակառուցվածքային ակտիվների վերահսկման և ձեռքբերման ուղղությամբ՝ հիմնական շեշտը դնելով էներգետիկայի ոլորտի վրա: Կառուցվածքային առումով երկու կարևոր տեղաշարժեր գրանցվեցին: Նախ՝ պաշտոնական Մոսկվան փաստորեն հրաժարվեց ԱՊՀ քաղաքական միասնականությունն ամեն գնով պահպանելու նախկին կարծրացած մոտեցումներից՝ առաջին պլան մղելով նախկին խորհրդային տարածքում պրոֆիլային միավորումների և կազմակերպությունների ստեղծումը, որոնց շրջանակներում Ռուսաստանն ավելի ուժեղ և արդյունավետ ազդեցության լծակների է տիրապետում: Երկրորդ՝ զգալիորեն ընդլայնվեց Ռուսաստանի ներթափանցման աշխարհագրությունը՝ ՌԴ ազդեցության ոլորտ ներառելով ոչ միայն նախկին «մերձավոր արտասահմանը», այլև եվրոպական և եվրասիական մի շարք երկրներ: Մասնավորապես՝ էներգակիրների մատակարարման և ակտիվների տեղաբաշխման առումով ռուսաստանյան շարժընթացը Եվրոպայում արդեն շոշափելի արդյունքներ է տվել. ներկայումս «Գազպրոմին» են պատկանում ԵՄ 27 երկրներից 16-ի պրոֆիլային ընկերությունների բաժնետոմսերը: ՌԴ ֆինանսական և էներգետիկ ցանցակենտրոն էքսպանսիայի կիզակետում են գտնվում գլխավորապես Բալկանյան պետությունները, Ավստրիան, Իտալիան և Գերմանիան՝ որպես հանգուցային գործընկերներ, ինչպես

նաև Թուրքիան, որի հետ 2009 թ. հոկտեմբերին վերջնականապես հստակեցվեցին «Հարավային հոսք» նախագծի իրագործման պարամետրերը (Թուրքիայի անմիջական մասնակցությամբ մեկ այլ էներգետիկ նախագիծ՝ «Երկնագույն հոսքը», մի քանի տարի է, ինչ գործում է):

Այս զարգացումների ֆոնին 2009 թ. հոկտեմբերին հայ-թուրքական արձանագրությունների ստորագրումը և սահմանի հնարավոր բացման հեռանկարը Ռուսաստանի համար ինչ-որ «հանկարծակի» և անսպասելի փոփոխական չեն պարունակում: Նահանջը երբեմնի «հիերարխիկ» փոխհարաբերությունների սխեմաներից և ՌԴ-Հարավային Կովկաս փոխգործակցության համադրույթի տեղափոխումը իր գլոբալ շահերի հարթության մեջ կարող են դառնալ Ռուսաստանի բազմաքայլ քաղաքականության տարբերակ՝ հասնելու իր ռազմավարական նպատակներին արդիական եղանակներով և միջոցներով:

Այս համատեքստում հատկանշական էր արձանագրությունների ստորագրմանը հետևած ՌԴ ԱԳՆ Ս. Լավրովի հայտարարությունն այն մասին, որ Մոսկվան պատրաստ է օժանդակելու գործընթացին՝ Հայաստանի և Թուրքիայի հետ երկկողմանի նախագծերի իրագործման միջոցով: Հետաքրքրական է, որ 2008 թ. ռուս-վրացական պատերազմի հետևանքով լարված ՌԴ-ԵՄ հարաբերությունների ֆոնին Հարավային Կովկասում ԵՄ հատուկ ներկայացուցիչ Պ. Սեմներին հաստատեց, որ Ռուսաստանը լուրջ շահեր է հետապնդում Հարավային Կովկասում և հաստատական է դրանք պաշտպանելու գործում. «Ռուսաստանը շահագրգռված է Հայաստանի տնտեսական զարգացման մեջ: Անհրաժեշտ պայմաններ պետք է ստեղծվեն նման դինամիկ զարգացման համար: Հայկական տնտեսության դիվերսիֆիկացումը և զարգացման արագացումը բխում են Ռուսաստանի շահերից»:

Մյուս կողմից, եթե օգտագործենք միջազգային հարաբերությունների տեսության ոլորտի եզրաքանությունը, հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը, ինչպես նաև երկու պետությունների հնարավոր համատեղ ներգրավումը հեռանկարային համատարածաշրջանային և որոշ իմաստով գլոբալ նախագծերի մեջ «կախյալ փոփոխականի» կարգավիճակ են ստանում: Այսպես՝ ԱՄՆ պետքարտուղար Ջ. Քլինթոնի հետ հանդիպման ժամանակ ՌԴ նախագահ Դ. Մեդվեդևն իր հերթին մատնանշեց, որ հայ-թուրքական արձանագրությունների ստորագրումը ռուս-ամերիկյան լավ համակարգված գործողության օրինակ է՝ ակնարկելով գործընթացի «փաթեթային» բովանդակությունը:

Վահագն Ազյան

պատմական գիտությունների թեկնածու

**ԱՐԴՅՈ՞Ք ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՍԱՀՄԱՆԻ ՃԱՆԱԴՈՒՄԸ
ԵՆԹԱԴՐՈՒՄ Է ԿԱՐՍԻ ԿԱՍ ԱՅԼ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ**

Իրավական գնահատական տալով Հայաստանի և Թուրքիայի Հանրապետությունների միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին արձանագրության նախաբանի համապատասխան դրույթին, որտեղ ասվում է, որ «հաստատելով երկու երկրների միջև գոյություն ունեցող սահմանի փոխադարձ ճանաչումը, ինչպես սահմանված է միջազգային իրավունքի համապատասխան պայմանագրերով», անհրաժեշտ է առաջնորդվել այն միջազգային իրավական իրողություններով, որոնք ձևավորվել են մինչ այս փաստաթղթի ստեղծումը:

Այդպիսի կարևորագույն գործոն է այն, որ Հայաստանի Հանրապետությունը 1991 թ. իր պետականությունը վերականգնել է նախկին Հայկական ԽՍՀ տարածքի սահմաններում և ստացել միջազգային ճանաչում՝ որպես միջազգային իրավունքի լիիրավ սուբյեկտ: Հետևաբար՝ այլ պետությունների հետ փոխհարաբերություններում Հայաստանն ի սկզբանե առաջնորդվել է գոյություն ունեցող սահմանների ճանաչման միջազգային-իրավական իրողությամբ:

Դրա մասին են վկայում նաև Հայաստանի Հանրապետության միջազգային իրավական պարտավորությունները, որոնք պետությունը ստանձնել է մի շարք միջազգային կառույցներին միանալիս: Այդպիսի պարտավորություններ է ստանձնել ՄԱԿ-ի անդամ դառնալով, ԱՊՀ և Եվրոպական կառույցներին անդամակցելով: Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է Հելսինկյան եզրափակիչ ակտը, Փարիզյան խարտիան, որոնցում ամրագրված է Եվրոպայում գոյություն ունեցող սահմանների ճանաչման սկզբունքը:

Այսպիսով, պետք է փաստել, որ գոյություն ունեցող սահմանի ճանաչումն արձանագրությունում միջազգային իրավական իմաստով «նորույթ» չէ, առավել ևս եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ քննարկվող դրույթը տեղ է գտել փաստաթղթի նախաբանում: Խնդիրն այն է, որ միջազգային պայմանագրերի նախաբաններում սովորաբար օգտագործվող «ճանաչելով», «նշելով», «կարևորելով», «հաստատելով», «վկայակոչելով» և այլ նման ձևակերպումները պայմանագրի կողմերի համար ոչ այնքան իրավական պարտավորություններ են սահմանում, որքան արձանագրում են գոյություն ունեցող իրողությունները: Պայմանագրերի նախաբանների իրավական դերը հիմնականում սահմանափակված է այն նշանակությամբ, որը կարող է այն ունենալ պայմանագիրը մեկնաբանելիս: Այսպիսով, դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին հայ-թուրքական քննարկվող արձանագրությունը կողմերի համար սահմանում է իրավաբանորեն պարտադիր մեկ հիմնական պարտավորություն՝ հաստատել դիվանագիտական հարաբերություններ և փոխանակել դիվանագիտական ներկայացուցչություններ: Ուստի և խնդրո առարկա դրույթին չարժե տալ ավելի մեծ իրավական նշանակություն (ինչպես հաճախ արվում է), քան իրականում այն ունի:

Ինչ վերաբերում է Կարսի կամ ցանկացած այլ պայմանագրի ճանաչմանը քննարկվող արձանագրությունների, այսինքն՝ այլ միջազգային պայմանագրի միջոցով, ապա դա որևէ կերպ չի համապատասխանում միջազգային իրավունքին: Միջազգային իրավունքում ընդհանրապես գոյություն չունի «միջազգային պայմանագրերի ճանաչում» հասկացություն: Միջազգային պայմանագրերի վերաբերյալ պետության կողմից համաձայնություն արտահայտելը, որի շնորհիվ այն իրավական ուժ է ստանում, հնարավոր է միայն Միջազգային պայմանագրերի մասին Վիեննայի 1969 թ. կոնվենցիայով և նրան համապատասխանող ներպետական օրենսդրությամբ սահմանված և խիստ կանոնակարգված ընթացակարգերի միջոցով: Հնարավոր չէ մի պայմանագրով ճանաչել կամ իրավական ուժ տալ մեկ այլ պայմանագրի: Հետևաբար՝ Կարսի պայմանագիրը չի կարող իրավական ուժ ստանալ սույն արձանագրությունների պատճառով:

Կարսի պայմանագրի իրավական ուժի վերաբերյալ կարևոր է նաև հաշվի առնել հետևյալը: ԽՍՀՄ փլուզումից հետո, երբ Հայաստանի Հանրապետությունը ձեռք բերեց անկախություն, հարց ծառացավ իրավահաջորդության մասին: Հայտնի է, որ իրավահաջորդությունը կարող է վերաբերել տարբեր խնդիրների, օրինակ՝ պետական գույքին, պետական արխիվներին, միջազգային պայմանագրերին: Հայտնի է նաև, որ իրավահաջորդությունը կարող է լինել լիակատար կամ «գրոյական», այսպես կոչված՝ *tabula rasa* (լատ.՝ մաքուր տախտակ) սկզբունքի կիրառմամբ: Անդրադառնալով միջազգային պայմանագրերի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության իրավահաջորդությանը՝ պետք է փաստել, որ այստեղ կիրառվել է հենց այդ սկզբունքը: Այսինքն՝ վերականգ-

նելով իր միջազգային իրավական իրավասությունները՝ Հայաստանի Հանրապետությունն իր միջազգային իրավական պայմանագրային հարաբերությունները սկսել է նոր, «մաքուր» էջից՝ միանալով, վավերացնելով կամ հաստատելով այն բոլոր միջազգային պայմանագրերը, որոնք ներկայումս կազմում են հանրապետության համար իրավական ուժ ունեցող պայմանագրերի ամբողջությունը: Նշված պայմանագրերի թվին չի դասվում Կարսի պայմանագիրը, ուստի՝ համաձայն ՀՀ Սահմանադրության՝ այն չի կարող համարվել ՀՀ-ում գործող միջազգային պայմանագիր, այն է՝ պայմանագիր, որն իրավական ուժ ունի Հայաստանի Հանրապետության համար:

*Վիգեն Բոչարյան
իրավաբանական գիտությունների թեկնածու*

ԻՆՉ ՀՆԱՐԱՎՈՐ ՄԱՐՏԱԳՐԱՎԵՐՆԵՐ ԿԱՐՈՂ Է ՍՏԵՂԾԵԼ ՀԱՅԱՍՏԱՆ-ԹՈՒՐԹԻԱ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

2008 թ. սեպտեմբերից մեկնարկած հայ-թուրքական «ֆուտբոլային դիվանագիտությունը» պատճառ դարձավ ակտիվ քննարկումների միջազգային ու պետական մակարդակներում, քաղաքական և ակադեմիական շրջանակներում: Այսօր կան մի շարք հարցադրումներ, որոնք այնքան էլ պարզորոշ չեն հանրային, մասամբ նաև քաղաքական մակարդակներում, իսկ որոշ քաղաքական ուժերի կողմից դրանք պարբերաբար շահարկվում են՝ առաջացնելով արհեստական, երբեմն անհիմն մտահոգություններ հասարակական լայն շրջանակներում: Ստորև կփորձենք ներկայացնել դրանցից հիմնականները, որոնք մենք առանձնացրել ենք վերջին մեկ տարվա ընթացքում կատարված դիտարկումների արդյունքում:

Այսօր շատ է խոսվում Հայաստանի տնտեսության վրա սահմանի վերաբացման բացասական ազդեցությունների, մասնավորապես, ջերմոցային պայմաններում աճած և մենաշնորհայնացված հայկական տնտեսության համար թուրքական շուկայի և ընկերությունների հնարավոր վտանգի մասին: Կարծում ենք՝ սահմանի վերաբացումն իսկապես լուրջ մարտահրավեր է մեր տնտեսության համար, որին դիմակայելու մեխանիզմների մասին հարկ էր մտածել սահմանի փակման օրվանից սկսած, քանզի սահմանի վերաբացումը, ակնհայտորեն, ընդամենը ժամանակի հարց է: Այսօր հնարավոր չէ կարճ ժամանակահատվածում մեր տնտեսությունը լիարժեք նախապատրաստել այդ մարտահրավերներին դիմակայելու համար: Այս հարցում մեզ կարող է օգնել երեք հանգամանք, նախ՝ բիզնես-ընկերությունների ինքնապաշտպանական և նոր պայմաններին արագ հարմարվելու կարողությունը, երկրորդ՝ սահմանի վերաբացումը չի նշանակում սահմանի վերացում, ինչպես դա եՄ-ի ներսում է, որտեղ Շենգենյան պայմանագրի երկրների միջև այլևս գոյություն չունեն սահմաններ՝ դասական ընկալմամբ, երրորդ՝ տնտեսության ոլորտում անհրաժեշտ բարեփոխումներ կատարելու համար տնտեսական հատուկ ռեժիմ մտցնելը: Թուրքիան և Հայաստանը Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամ-երկրներ են, իսկ

այդ կառույցի կանոնների համաձայն՝ Ա անդամ-պետությունը կարող է Ք անդամ-պետության նկատմամբ կիրառել սահմանափակող ռեժիմ միայն այն դեպքում, եթե Ա պետությունը հիմնավորում է իր ազգային (տնտեսական) անվտանգության համար Ք պետության հնարավոր բացասական հետևանքները: Այսինքն՝ Հայաստանը կարող է Թուրքիայի հետ առևտրատնտեսական հարաբերություններում սահմանել ժամանակավոր հատուկ ռեժիմ (արտոնելով միայն միջպետական և տարանցիկ բեռնափոխադրումները, օգտագործել տնտեսական պրոտեկցիոնիզմի որոշ տարրեր՝ հայրենական արտադրողների համար արտոնյալ պայմաններ ստեղծելու նպատակով, և այլն): Սակայն դա պետք է ունենա ժամանակավոր բնույթ՝ մինչև մեր տնտեսական օրենսդրության, քաղաքականության կարգավորումը: Հիմնական դրական հետևանքներից հարկ է նշել հայկական արտադրողների չմիջնորդավորված մուտքը թուրքական, իսկ դրա միջոցով՝ նաև եվրոպական շուկաներ, միջպետական տարածաշրջանային և միջտարածաշրջանային առկա ու հեռանկարային հաղորդակցային և էներգետիկ նախագծերին մասնակցության հնարավորությունների դիվերսիֆիկացումը, որոնք ոչ միայն կստեղծեն օրեկտիվ պայմաններ Հայաստանում ապրանքների գների իջեցման, պետական բյուջեի եկամուտների ավելացման համար, այլև կվերացնեն Հայաստանի կախվածությունը Վրաստանի հաղորդակցական ածպարարությունից, Հայաստանը կվերածեն տարանցիկ հնարավորություններով երկրի: Սա էլ իր հերթին կնպաստի Հայաստանի դիրքերի ամրապնդմանն ընդհանրապես միջազգային ասպարեզում: Իսկ վերջինիս ընձեռած հնարավորությունները և ազդեցության գործիքներն ունեն լայն սպեկտոր, ինչի դասական օրինակներն են մեր արևմտյան և հյուսիսային հարևանները:

Սահմանի բացման ազդեցությունը Հայաստանի արտաքին քաղաքականության վրա

Հաճախ խոսվում է այն մասին, որ սահմանի վերաբացումից հետո, ելնելով տարածաշրջանային նոր վերադասավորումներից, Հայաստանի արտաքին քաղաքականությունն արմատապես կփոխվի: Կարծում ենք՝ արմատական վերանայումներ չեն լինի, սակայն արտաքին քաղաքականությունը կլինի առավել ընդգծված կոմպլիմենտար: Բանն այն է, որ իր արտաքին ու հատկապես անվտանգության քաղաքականության ոլորտում Հայաստանն ունի հստակ պայմանագրային պարտավորություններ, որոնցից հրաժարվելը կսպառնա հենց մեր երկրի անվտանգությանը:

Սահմանի վերաբացումն առավել ակտիվ ու անկաշկանդ կդարձնի Հայաստանի տարածաշրջանային քաղաքականությունը: Վրաստանը վերջնականապես կկորցնի տարածաշրջանում իր՝ տարանցիկ երկրի բացառիկ կարգավիճակը և դա իր արտաքին քաղաքականության մեջ օգտագործելու հնարավորությունները:

Ադրբեջանը մասամբ կզրկվի Հայաստանին երկկողմ շրջափական ենթարկելու հնարավորությունից, ինչը նրա այժմյան տարածաշրջանային և անվտանգության քաղաքականության համար կարևոր գործոնն է:

Թուրքական սահմանի բաց լինելու պատճառաբանությամբ արևմտյան երկրներն ու կառույցները կարող են պահանջել Հայաստանից միանալ Իրանի դեմ կիրառվող բոլոր պատժամիջոցներին: Եթե, այդուհանդերձ, չլինեն նման պահանջներ, կամ էլ Հայաստանին հաջողվի պահպանել Իրանի հետ ներկայիս փոխհարաբերությունները, ապա Իրանը ևս կստանա լրացուցիչ հնարավորություն Հայաստանի և Թուրքիայի տարածքներով բեռնափոխադրումներ իրականացնելու համար, երբ կառուցվի Իրան-Հայաստան երկաթգիծը:

Բացի այդ, Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերությունների վերահաստատումը Հայաստանին հնարավորություն կընձեռի հարստացնել իր արտաքին քաղաքականության զինամոցը նոր միջոցներով և մեթոդներով:

*Նարեկ Գալստյան
քաղաքական գիտությունների թեկնածու*

ԱՐԴԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՎ

ԹՈՒՐԿԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետությունը և Թուրքիայի Հանրապետությունը,

ձգտելով հաստատել բարիդրացիական հարաբերություններ և զարգացնել երկեզում համագործակցությունը քաղաքական, տնտեսական, մշակութային և այլ ոլորտներում, ի շահ իրենց ժողովուրդների՝ համաձայն հարաբերությունների զարգացման մասին մույն օրը ստորագրված Արձանագրության,

վկայելով Սիւրմուքի կազմակերպության Կանոնադրությամբ, Հելսինկյան եզրափակիչ ակտով, Նոր Եվրոպայի համար փարիզյան խարտիայով իրենց ստանձնած պարտավորությունները,

վերահաստատելով իրենց երկեզում և միջազգային հարաբերություններում հավասարության, ինքնիշխանության, այլ պետությունների ներքին գործերին չմիջամտելու, տարածքային ամբողջականության և տանձնանքի անխախտելիության սկզբունքները հարգելու և հարգումը երաշխավորելու իրենց համձմառությունը,

հաշվի առնելով ամբողջ տարածաշրջանում խաղաղության, անվտանգության և կայունության ամրապնդմանը նպաստող՝ երկու երկրների միջև հավատի և վստահության մթնոլորտ ստեղծելու և պահպանելու կարևորությունը, ինչպես նաև վճռական լինելով զերծ մնալ ուժի կիրառումից կամ այն կիրառելու սպառնալիքից, խրախուսել վեճերի խաղաղ կարգավորումը, պաշտպանել մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները,

հաստատելով երկու երկրների միջև գոյություն ունեցող սահմանի փոխադարձ ճանաչումը, ինչպես նաև համաձայն ի միջազգային իրավունքի համապատասխան պայմանագրերով,

կաթողելով ընդհանուր սահմանը քաջելու իրենց որոշումը,

վերահաստատելով իրենց համձմառությունը՝ ձեռնպահ մնալ բարիդրացիական հարաբերությունների ոգուն չհամապատասխանող քաղաքականություն վարելուց,

դառապառելով ահաբեկչության, լուծարման և ծայրահեղականության թուր ձևերը՝ անկախ դրանց պատճառներից, խոստանալով ձեռնպահ մնալ նման

գործողությունները խրախուսելուց ու համորոշելուց և համագործակցել դրանց դեմ պայքարում,

հաստատելով ընդհանուր շահերի, բարի կամքի վրա հիմնված հարաբերությունների նոր ձևեր ու ուղիներ մշակելու և խաղաղության, փոխըմբռնման ու մերդաշնակության ձգտելու իրենց պատրաստակամությունը,


համաձայնեցին հաստատել դիվանագիտական հարաբերություններ՝ Դիվանագիտական հարաբերությունների մասին Վիեննայի 1961 թվականի կոնվենցիային համապատասխան, սույն Արձանագրության ուժի մեջ մտնելու օրվանից և փոխանակել դիվանագիտական ներկայացուցչություններ:

Սույն Արձանագրությունը և Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև հարաբերությունների զարգացման մասին Արձանագրությունն ուժի մեջ են մտնում մույն օրը՝ վավերագրերի փոխանակմանը հաջորդող առաջին ամսվա առաջին օրը:

Ստորագրված է Երուրիս քաղաքում 2009 թվականի հոկտեմբերի 10-ին, հայերեն, թուրքերեն և անգլերեն հավասարազոր երկու քնօրինակներով: Մեկնաբանության տարբերության դեպքում անգլերեն տեքստը կգերակայի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՈՂՄԻՑ՝



ԷԴՎԱՐԴ ՆԱԲԵՐԱՅԱՆ
ԱՐՏԱԶԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ԹՈՒՐԿԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՈՂՄԻՑ՝



ԱՀՄԵՏ ԴԱՎՈՒԹՕՂՈՒ
ԱՐՏԱԶԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ԱՐԶԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՎ

ԹՈՒՐԶԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

ՀԱՐԱՐԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետությունը և Թուրքիայի Հանրապետությունը,

դիվանագիտական մոլորակ ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին Արձանագրությանը,

նկատի ունենալով վստահության և միմյանց շահերի հարգման վրա հիմնված երկկողմ հարաբերությունների զարգացման հեռանկարները,

որոշելով զարգացնել և ամրապնդել իրենց երկկողմ հարաբերությունները քաղաքական, տնտեսական, էներգետիկ, տրանսպորտի, գիտական, տեխնիկական, մշակութային և այլ ոլորտներում՝ հիմնվելով երկու երկրների ընդհանուր շահերի վրա,

աջակցելով երկու երկրների միջև համագործակցության խթանմանը միջազգային և տարածաշրջանային կազմակերպություններում, հատկապես ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի, Եվրոպայի խորհրդի, Եվրատարածության գործընկերության խորհրդի և ՄՕՏՀ-ի շրջանակներում,

հաշվի առնելով երկու պետությունների ընդհանուր նպատակը՝ համագործակցել տարածաշրջանի կայունության և անվտանգության ամրապնդման ուղղությամբ՝ տարածաշրջանի ժողովրդավարական և տեղական զարգացման ապահովման համար,

վերահաստատելով միջազգային իրավունքի նորմերի և սկզբունքների հիման վրա տարածաշրջանային և միջազգային վեճերն ու հակամարտությունները խաղաղ կարգավորելու իրենց համաձայնությունը,

վերահաստատելով իրենց պատրաստակամությունը՝ ակտիվորեն աստարել միջազգային հանրության գործողություններին՝ դիմակայելու համար տարածաշրջանում և աշխարհում անվտանգության և կայունության դեմ առկա ընդհանուր սպառնալիքներին, ինչպիսիք են ահաբեկչությունը, անդրազգային կազմակերպված հանցավորությունը, թմրամիջոցների և զենքի ապօրինի շրջանառությունը,

1. համաձայնում են քայքայել ընդհանուր սահմանը սույն Արձանագրության ուժի մեջ մտնելուց հետո երկու ամսվա ընթացքում.

2. համաձայնում են՝

երկու երկրների արտաքին գործերի նախարարությունների միջև կանոնավոր կերպով անցկացնել քաղաքական խորհրդակցություններ,

իրականացնել երկու ժողովուրդների միջև փոխվստահության վերականգնման ուղղված պատմական հարթության երկխոսություն, այդ թվում՝ պատմական փաստաթղթերի և արխիվների անկողմնակալ գիտական ուսումնասիրություն՝ առկա խնդիրների սահմանման ու առաջարկների ձևակերպման համար,

առավելագույնն օգտագործել երկու երկրների միջև գոյություն ունեցող՝ տրանսպորտային, հաղորդակցության և էներգետիկ ենթակառուցվածքներն ու ցանցերը և միջոցներ ձեռնարկել այդ ուղղությամբ,

ստեղծել երկկողմ իրավական դաշտ՝ երկու երկրների միջև համագործակցությունը խթանելու նպատակով,

համագործակցել գիտության և կրթության ոլորտներում համապատասխան հաստատությունների միջև հարաբերությունները խրախուսելու, ինչպես նաև մասնագետների և ուսանողների փոխանակումը խթանելու միջոցով և աշխատանք տանել երկու կողմերի մշակութային ժառանգության պահպանման և համատեղ մշակութային ծրագրեր սկսելու նպատակով,

համագործակցություն հաստատել հյուպատոսական քննազատում՝ Հյուպատոսական հարաբերությունների մասին Վիեննայի 1963 թվականի կոնվենցիայի համաձայն, երկու երկրների քաղաքացիներին անհրաժեշտ աջակցություն և պաշտպանություն ցուցաբերելու նպատակով,

ձեռնարկել կոնկրետ միջոցներ երկու երկրների միջև առևտուրը, զբոսաշրջությունը և տնտեսական համագործակցությունը զարգացնելու նպատակով,

սկսել երկխոսություն և ամրապնդել համագործակցությունը բնապահպանական հարցերով.

3. համաձայնում են ստեղծել միջկառավարական երկկողմ համաժողով, որը քաղաքացի կլինի առանձին ենթահամաժողովներից, սույն Արձանագրության՝ վերջ մշակած երկրորդ գործառնության կետում նշված համաձայնությունների արագ իրականացման նպատակով: Միջկառավարական համաժողովի և նրա ենթահամաժողովների աշխատանքների մշակման նպատակով սույն Արձանագրության ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից 2 ամիս անց կստեղծվի աշխատանքային խումբ երկու արտգործնախարարների դիվանագրությանը: Սույն

Արձանագրության ուժի մեջ մտնելուց հետո՝ 3 ամսվա ընթացքում, այդ աշխատանքները կհաստատվեն մախարադների մակարդակով: Միջկատարակալան համընթացողովի առաջին միստը կկայանա մշված աշխատանքների ընդունումից անմիջապես հետո: Եմթահանմաժողովները կսկսեն իրենց աշխատանքը դրանից ոչ ուշ, քան մեկ ամիս անց, և կգործեն շարունակարար՝ մինչև իրենց մանդատի ավարտը:


Հատ անհրաժեշտության՝ միջազգային փորձագետներ կմասնակցեն ենթահանմաժողովների աշխատանքներին:

Սույն Արձանագրության իրագործման համար երկու կողմերի համաձայնեցրած ժամանակացույցը և տարրերը ներկայացված են հավելվածում, որը սույն Արձանագրության անբաժանելի մասն է:

Սույն Արձանագրությունը և Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին Արձանագրությունը ուժի մեջ են մտնում մույմ օրը՝ վավերագրերի փոխանակմանը հաջորդող առաջին ամսվա առաջին օրը:


Ստորագրված է Զյուրիխ քաղաքում 2009 թվականի հոկտեմբերի 10-ին, հայերեն, թուրքերեն և անգլերեն՝ հավասարազոր երկու քնօրինակներով: Մեկնաբանության տարբերության դեպքում անգլերեն տեքստը կգերակայի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ՝



ԷՎԱԼԱՐ ՆԱԲԵՒՂՅԱՆ
ԱՐՏԱԶԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ԹՈՒՐԿԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ՝




ԱՀՄԵՏ ԴԱՎԱՌԹՕՐԱՆԻ
ԱՐՏԱԶԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Հավելված. Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև հարաբերությունների զարգացման մասին Արձանագրության իրագործման ժամանակացույց և տարրեր

Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև
հարաբերությունների զարգացման մասին
Արձանագրության իրագործման ժամանակացույց և տարրեր


Ժամանակվերջը քաղաք	Ժամկետ
1. Ընդհանուր սահմանի քաղաք	Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև հարաբերությունների զարգացման Արձանագրության ուժի մեջ մտնելուց հետո երկու ամսվա ընթացքում
2. Երկու արագործման կարգադրությունների դեկլարացիայի միջոցառումների խմբի տեղիում՝ միջկատարակալան համընթացողովի և նրա ենթահանմաժողովների աշխատանքների մշակման նպատակով	Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև հարաբերությունների զարգացման Արձանագրության ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից երկու ամիս անց
3. միջկատարակալան համընթացողովի և նրա ենթահանմաժողովների աշխատանքների հաստատում մախարադների մակարդակով	Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև հարաբերությունների զարգացման Արձանագրության ուժի մեջ մտնելուց հետո երեք ամսվա ընթացքում
4. միջկատարակալան համընթացողովի առաջին նիստի կազմակերպում	միջկատարակալան համընթացողովի և նրա ենթահանմաժողովների աշխատանքների ընթացումից անմիջապես հետո՝ մախարադական մակարդակով
5. առաջին մշված ենթահանմաժողովների աշխատանքների ինկնակ. - քաղաքական խորհրդակցությունների հարցերի ենթահանմաժողով, - տրամադրության, հաղորդակցության և լինիցների ենթակառուցվածքների և ցանցերի հարցերի ենթահանմաժողով, - իրավական հարցերի ենթահանմաժողով, - գիտության և կրթության հարցերի ենթահանմաժողով, - առևտրի, զբոսաշրջության և տնտեսական համագործակցության հարցերի ենթահանմաժողով, - քննադատական կալան հարցերի ենթահանմաժողով, և - պատմական հարաբերությունը զբաղվող ենթահանմաժողով՝ երկու ժողովուրդների միջև փոխկապակցության վերականգնմանն ուղղված երկխոսության իրականացման նպատակով, այդ թվում՝ պատմական փաստաթղթերի և արխիվների անկախիմակալ գիտական ուսումնասիրության, առկա խնդիրների տանմանում ու առաջարկների ձևակերպման համար՝ հայ, թուրք, իմշված նաև, շվեյցարացի և այլ միջազգային փորձագետների մասնակցությամբ	միջկատարակալան համընթացողովի առաջին նիստից ոչ ուշ, քան մեկ ամիս անց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ՝



ԷՎԱԼԱՐ ՆԱԲԵՒՂՅԱՆ
ԱՐՏԱԶԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ԹՈՒՐԿԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ՝



ԱՀՄԵՏ ԴԱՎԱՌԹՕՐԱՆԻ
ԱՐՏԱԶԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՈՍՔ ԸՆԹԵՐՑՈՂԻՆ	3
ԱՏՈՐԱԳՐՎԱԾ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՄԴԵՐԸ ԴՈՒՐԻՍ Է ԳԱԼԻՍ ՔԱՐԱՆՉԱԿԻՑ	5
ՎՏԱՆԳՎՈՒՄ Է ԱՐԴՅՈՔ ՀԱՅԻ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԹՈՒՐԹԻԱՅԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՋԱՐԳԱՑՄԱՆ ԴԵՊՁՈՒՄ Տեսակետ 1	9
Տեսակետ 2	11
ԱՆԴՐԱՂԱՌՆԱԼՈՒՄ ԵՆ ԱՐԴՅՈՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԹՈՒՐԹԻԱՅԻ ՄԻՋԵՎ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ՓՈԽՀԱ- ՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎՐԱ Տեսակետ 1	13
Տեսակետ 2	15
ԻՆՉ ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԻ ԹՈՒՐԹԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԸ	18
ԻՆՉՈՒՄ Է ԱՐԵՎՍՈՒՏՔԸ ԿՈՂՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԹՈՒՐԹԻԱՅԻ ՄԻՋԵՎ ՍԱՀՄԱՆԻ ԲԱՑՄԱՆԸ	21
ԱՐԴՅՈՒՔ ՀԱՅ-ԹՈՒՐԹԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՆՉՆԱԺՈՂՈՎԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՋՔԱՂՎՈՂ ԵՆԹԱՀԱՆՉՆԱԺՈՂՈՎԻ ՍՏԵՂԾՄԱՄԲ ԿԱՍԿԱԾԻ ՏԱՎ Է ԴՐՎՈՒՄ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԸ	24
ՈՐՈՂՔ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԹՈՒՐԹԻԱՅԻ ՄԻՋԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԿՆԿԱԼՎՈՂ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ Տեսակետ 1	28
Տեսակետ 2	29
ՈՐՈՂՔ ԵՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՈԱՋՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀԱՅ-ԹՈՒՐԹԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ	31
ԱՐԴՅՈՒՔ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՍԱՀՄԱՆԻ ՃԱՆԱՉՈՒՄԸ ԵՆԹԱԴՐՈՒՄ Է ԿԱՐՍԻ ԿԱՍ ԱՅԼ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ	34
ԻՆՉ ՀՆԱՐԱՎՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ ԿԱՐՈՂ Է ՍՏԵՂԾԵԼ ՀԱՅԱՍՏԱՆ- ԹՈՒՐԹԻԱ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ	37
ՀԱՎԵԼՎԱԾ	40

ՏԱՍԸ ՀԱՐՑ ՏԱՍԸ ՊԱՏԱՍԽԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՎ ԹՈՒՐԹԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԻՋԵՎ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՈՒ
ԵՐԿԿՈՂՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՏԵՍԱԿԵՏՆԵՐ ԵՆ ՀԱՅՏՆՈՒՄ
ԵՊՀ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԸ

Հրատ. խմբագիր՝ Լ. Ավետիսյան
Սրբագրիչ՝ Վ. Դերձյան
Համ. ձևավորումը՝ Ա. Աղուզումճյանի

Ստորագրված է տպագրության 24.11.2009 թ.:
Չափսը՝ 60x84 /16: Թուղթը՝ օֆսեթ: Տպագրությունը՝ օֆսեթ:
Հրատ. 2.5 մամուլ, տպագր. 3.0 մամուլ = 2.8 պայմ. մամուլի:
Տպաքանակ՝ 2000: Պատվեր՝ 85:

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1

ԵՊՀ տպագրատուն, Երևան, Արուստյան 52